



ԻՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ
ՍՏՐԻԱՐԶՈՒԹԵՄՆ
ՀԱՅՈՉ
ՆՐՈՒՍԱԳԷՄԻ

Ծ ՏԵՄԲ

Ը-Թ

1976

Ն
246





ԿՐՕՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՊԱՇՏՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԿԷՍԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

1976

Օգոստոս - Սեպտեմբեր

Թիւ 8 - 9

1976

August - September

No. 8 - 9

SION

VOL. 50


A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



St. James Press
Jerusalem





ԱԼԵՔՍ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ
 ԺԱՌԱՆԳԱԽՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԺԱՅԱՐԱՆԻ
 ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՈՐ ՏԱՐԵՇՐՋԱՆԸ

Երուսաղեմի Հայ Պատրիարքության բազմադարեան պատմութեան մէջ մասնաւոր տեղ մը պիտի գրաւէ ապահովաբար 14 Սեպտեմբեր 1976 թուականը, երբ, Ս. Աթոռիս Պատրիարք Ն. Ամենապատուութիւն Տ. Եղիշէ Ս. Արքեպս. Տէրտէրեանի նախագահութեամբ և ի ներկայութեան Ս. Յակոբեանց բովանդակ Միաբանութեան, կատարուեցաւ Դպրեվանքի 1976 - 1977 ուսումնական տարեշրջանի պաշտօնական բացումը՝ Ալեքս և Մարի Մանուկեան ժառանգաւորաց Վրժ.ի և Ընծայարանի նորակառոյց գեղեցիկ շէնքին մէջ:

Հայաստանեայց Եկեղեցիի և Հայ Ժողովուրդի փառքերէն մին հանդիսացող այս Հաստատութիւնը ուրախ թէ տխուր շատ օրեր է տեսած իր կեանքի ընթացքին. սակայն դարերը որոնք անցած են, երբեք կանցուցած կամ դանդաղեցուցած չեն Ս. Աթոռին առաքելութիւնը՝ որ է պահպանութիւնը Քրիստոսակոյ Սրբազան Տեղերուն, և հոգևոր հովիւներու մատակարարումը: Անցեալին, ան ինքնադիր այս գոյգ պարտաւորութիւնները իրագործած է անշեղ հաւատով, բացառիկ նուիրումով ու զոհողութեամբ. իսկ այսօր, որևէ ժամանակէ աւելի, ինքզինք պատրաստ



Ս. ԱԹՈՒՆԻ ԲԱՐԵՐԱՐ Ե. ՎՍԵՄ. ՏԵՐ ԵՒ ՏԿԼ.

ԱԼԵԿՍ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆՆԵՐ

ու կարող կը գգայ իր գործունէութիւնը նոյն ուղիով շարունակելու վերանորոգուած կամֆով ու եռանդով:

Շէնքերը իրենք իրենց մէջ, պատերով և սենեակներով, անշուշտ որ ոչինչ են՝ երբ անոնցմէ ներս չեն գար բնակիլ *Մարդերը*, որոնք շունչ ու հոգի պիտի տան նոյն այդ ֆարերուն: Ամառը կ'արժեւորուի իր պարունակածով միայն և ոչ թէ ինքզինքով: Շէնք մը նպատակ չէ, այլ միջոց մը միայն՝ տիրանալու գեղեցիկ արդիւնքներու: Եթէ այս է պարագան պարզ շէնքին, որքան աւելի իմաստ ու նշանակութիւն պիտի ունենայ շինութիւն մը, որ պիտի դառնայ հարիւրաւոր ընծայեալներու կրթարանն ու ներշնչման օճակը:

Ալեքս և Մարի Մանուկեան ժառանգաւորաց Վարժարանն ու Բնծայարանը, Սրբոց Յակոբեանց Վանքի մայր մուտքի հանդիպակաց կողմը, կը հանդիսանայ ոչ միայն այսպիսի շէնք մը, այլ անոր մէջ մարմնացած է այս Հաստատութեան բազմադարեան աւանդութեան շարունակութիւնը. աւանդութիւն եկեղեցանք-ւիրամի, մշակոյթի ու կրթութեան հանդէպ տածուած պաշտամունքի հասնող սիրոյ, ինչպէս նաև անդուլ աշխատամքի: Այդ շէնքին վրայ բոլոր Հայերը սեռած են իրենց ակնկալող մայուածքները, գայն դարձուցած իրենց յոյսերուն և փափաքներուն կիզակտը, որովհետև Երուսաղէմի Դպրեվանքէն է որ անցեալին ելած են և ներկայիս կը շարունակեն հասնիլ մեր Եկեղեցիի ծառայողները, ըլլան անոնք պարզ հովիւներ թէ բարձրաստիճան իշխանաւորներ. հոնկէ է որ ելած և ազգային գործունէութեան ասպարէզ իջած են Հայ դպրոցի և Հայ մամուլի բազմաթիւ մշակներ, մանաւանդ արտասահմանի մեր յոյս-ստուեր գոյութեան բերելով միութարութիւն, եռանդ և իմաստ: Մասնաւորաբար ներկայիս, երբ կեանքը և մտայնութիւնները հիմնական յեղաշրջումներ կը կրեն, երբ օտար ֆաղափակրթութիւններ և ազդեցութիւններ ջլատել կը փորձեն մեր ազգային ինքնութիւնը, Հայ եկեղեցականը ոչ միայն հովիւ մըն է, այլ նաև իր հօտին իսկական առաջնորդը, համայնքին կրօնական թէ ազգային-ընկերային կեանքի կազմակերպողն ու մըղիչ ուժը, օտարներուն առջև պաշտօնական ներկայացուցիչը Հայութեան: Եւ այս բոլորը ընել կարենալու համար, ան պէտք է օժտուած ըլլայ եկեղեցագիտական խոր հմտութեամբ, տիրանայ կրթութեան բարձրագոյն աստիճաններու՝ լաւագոյն կերպով տանելու իր ուսերուն վրայ դրուած ֆաղք լուծը:

Այս մտահոգութիւնները, որոնք տարիներէ ի վեր կը գրադեցնէին Ս. Աթոռի Ամենապատիւ Գահակալը, արձագանգ գտան մեր դարու ամենէն հեղինակաւոր և ազնուական Հայուն՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Յկեանս Նախագահ Վեսմ. Տիար Ալեքս Մանուկեանի մօտ, որ, իր բազում գրադումներուն մէջ կրցաւ տեսնել և ըմբռնել նոր Դպրեվանքի մը շէնքի անհրաժեշտութեան իրաւացիութիւնը, և ստեղծել նկրտական պայմաններ՝ յայտնուող փափաքները իրագործելու: Եթէ «բարեբարելը հոգեկան գոհունակութիւն կը պատճառէ» տուողին, ինչպէս

այնքան գեղեցիկ կերպով կը շեշտէր Վսեմ. Տիար Մանուկեան անցեալ տարւոյ Յուլիսին, երբ Ալեքս և Մարի Մանուկեան ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի նորակառոյց շէնքին պաշտօնական բացումը կը կատարուէր նախագահութեամբ Ազգիս Ինծարեալ Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Առաջին Վեհափառ Կաթողիկոսին, այդ բարերարութիւնը որքան աւելի արժէք և իմաստ կը ստանայ՝ երբ կը կատարուի Դպրեվանքի մը շինութեան համար, ուրկէ պիտի բխի Հայ գաղութները առաջնորդող լոյսի սիւնը:

Եւ թերևս հոս իսկ է Վսեմափայլ Բարերարին մեծութիւնը:

Իրմէ առաջ մեր ժողովուրդը բարերարներ ունեցած է և ունի այսօր ալ. սակայն եթէ արագ ակնարկ մը նետենք Վսեմ. Տիար Մանուկեանի աւելի քան քսան տարիներու վրայ տարածուող բարերարութիւններու սքանչելի շարքին վրայ, պիտի տեսնենք որ ան հիմնապէս դպրոց կառուցանող անձնաւորութիւնն է, այսինքն ապագայ Հայ սերունդին դաստիարակութեան սկիզբէն իսկ գիտակցած է երիտասարդութեան կարևորութեան ու զայն հայեցի դաստիարակութեամբ օժտելու անհրաժեշտութեան: Իրեն համար դպրոցէն յետոյ կու գան երիտասարդական կազմակերպութիւններն ու ակումբները, ուր, նիւթական լաւագոյն պայմաններու ընձեռած մթնոլորտին մէջ մեր նոր սերունդը կը շարունակէ իր ազգային կեանքը ապրիլ:

Սակայն Վսեմ. Տիար Մանուկեանի դպրոցաշէն գործունէութեան թագն ու պսակը անվարան Երուսաղէմի նոր Դպրեվանքն է. իբրև շէնք սքանչելի նարտարայետութեամբ նոխացած, անսահման կարելիութիւններու ընդարձակ հորիզոններ բացող: Շինարարութեան ամբողջ ընթացքին, Վսեմ. Բարերարը մօտէն և շարունակաբար հետաքրքրուեցաւ տարուող աշխատանքով, այդպէս անգամ մը ևս արտայայտելով այն խոր սէրը և գնահատանքը զոր ունէր ժառանգաւորաց Վարժարանին և Ընծայարանին համար:

Եւ իրապէս, Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան Դպրեվանքը իր աւելի քան մէկ դարու գործունէութեամբ և արդիւնավոր արժանի է այդ սիրոյն:

* * *

Թերևս Ս. Յակոբեանց Միաբանութեան անձնագոհութեան և նուիրումին մէկ հռչակապ ապացոյցը պէտք է ընդունիլ այն իրողութիւնը որ, 1835ին, երբ Պատրիարքութիւնը նիւթական շատ անկապատ պայմաններու տակ կը գտնուէր, երախտաշատ Զաֆարիա Արքեպիսկոպոսի կողմէ գումարած հորիզոնականաց ժողովը կ'որոշէ Վանքէն ներս ժառանգաւորաց Վարժարան և տպարան հաստատել՝ միաբաններու կողմէ կատարուելիք նուիրատու-

ուրիշներով: Ժողովին արձանագրութիւնը կը սկսի հետևեալ բը-
նորոշ նախադասութիւններով. «Ի բազմաց անտի ժամանակաց
նախ քան զմեզ՝ բարեյիշատակ նախնիքն մեր փափաքէին հաստա-
տել ի մէջ Սրբոյ Աթոռոյ յատուկ ուսումնարան մի՝ վասն հոգևոր
և ուսումնական կրթութեան կրօնաւորաց Սրբոյ Աթոռոյ. որպէս
վաղ ուրեմն երկնէաք և մեք ի սրտի գայս երկն համայնից բաղձա-
լի. սակայն յաղագս բազմադիմի ձախորդութեանց՝ ոչ նախնիք և
ոչ մեք մարթացաք գայս փափաք լրացուցանել: Այլ քանզի Աստ-
ուած է որ յաջողէ զամենայն յամենայնի, . . . որպէս և այժմ ըզ-
նոյն եռանդն նախնեաց քաջալաւ ևս բարեմախանձ իմն ըզձիւ տար-
լացոյց ի սիրտս մեր՝ հաստատել զուսումնարանն մշտատև»: Եւ
այսպէս, Աստուծով զօրացած, «ուսումնարան»ին համար Միա-
բարձութեան անդամները կը նուիրեն իրենց կեանքի խնայողու-
թիւնները, ընդհանուր գումարը հասցնելով հարիւր տաս հազար
շահեկանի, պատկառելի հարստութիւն մը այդ օրերուն:

Երջանկայիշատակ Զաքարիա Պատրիարքի օրով, 1843ին
Ռամլէի հայապատկան Սուրբ Գէորգ վանքին մէջ իր համեստ
կեանքը սկսող Ժառանգաւորաց Վարժարանը դարձաւ պա-
րարտ հողի ակօսին նետուած այն հատիկը, որ տարիներու ընթաց-
քին անընդմէջ ուռնացաւ, վերածուելու համար այսօրուան ար-
դիւնաշատ հաստատութեան: 1853ին, Յովհաննէս Պատրիարքի
ջանքերով կառուցուած գեղեցիկ շէնքին մէջ կը վերսկսէր Վարժա-
րանը, և մօտ մէկ և քառորդ դար, ծառերու մեղմ սօսափին և հաս-
տապատ սենեակներու առանձնութեան մէջ էր որ կը պատրաստը-
ւէին Հայ Եկեղեցիի բազմահարիւր ծառայողները: Մասնաւորա-
բար Մեծ Եղեռնէն ետք, երբ ա՛լ չկային Վարագներն ու Արմաշնե-
րը, Ս. Կարապետներն ու Ս. Նշանները, Երուսաղէմ դարձաւ այն
գլխաւոր կեդրոնը ուր պիտի պահպանուէին Հայ Առաքելական Ե-
կեղեցիի Լուսաւորչադիր օրէնքներն ու աւանդութիւնները հետևո-
ղական խստութեամբ, և ուրիշ Հայ տարագիր բազմութիւնները
սփոփելու պիտի երթային պատրաստուած ու գիտակից եկեղեցա-
կաններու հոյլեր: 1920ին վերաբացուած Ժառանգաւորաց Վարժա-
րանը և Ընծայարանը նոր քափ ստացան Երջանկայիշատակ
Պատրիարքներ Եղիշէ Արքեպս. Գուրեանի, Թորգոմ Արքեպս. Գու-
շակեանի և Մեսրոպ Արքեպս. Նշանեանի գահակալութիւններու
շրջանին. պատրաստուած ուսուցիչներու և ծանօթ արուեստագէտ-
մտաւորականներու ներկայութիւնը Դպրեվանքէն ներս՝ անոր տը-
ւաւ արդար հռչակ մը իբրև արտասահմանի ամենէն կարևոր կըր-
թական հաստատութիւններէն մին: Նոյնիսկ 1948ի Պաղեստինեան
պատերազմի ընթացքին, Ժառանգաւորաց Վարժարանը ան-
խափան շարունակեց իր կեանքը: Վերածաղկումի նոր շրջան մը
սկսաւ մանաւանդ 1960էն ետք, երբ Առաքելական Աթոռ բարձրա-
ցաւ Նորին Ամենապատուութիւն Տ. Եղիշէ Ս. Արքեպս. Տէրտէր-
եան, որ իբրև նախկին երկարամեայ Տեսուչ նոյն հաստատու-
թեան, Դպրեվանքը իր սրտին մօտ յարկ մը կը նկատէ:

Երուսաղէմի ժառանգաւորացին բովէն անցած են, յիշելու համար մի քանի միայն այդ հաստատութեան շրջանաւարտներուն, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բազմաչարչար պետր՝ Երջնկ. Սահակ Խաչայեան, նոյն Աթոռի Կաթողիկոս Երջնկ. Պետրոս Սարանեանը, Ս. Աթոռիս Երջնկ. գահակալներ Մեսրոպ Պատրիարք Նշանեանը և Կիւրեղ Պատրիարք Իսրայէլեանը, ներկայ գահակալ Ն. Ամեն. Տ. Եղիշէ Ս. Արքեպս. Տէրտէրեանը, Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ն. Ամեն. Տ. Շնորհք Ս. Արքեպս. Գալուստեանը, Ս. Աթոռիս Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ալլանեանը, Ս. Էջմիածնի Լուսարարապետ Հանգուցեալ Տ. Հայկազուն Արքեպս. Արքահամեանը, Արևմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ Գերշ. Տ. Սերոբէ Արքեպս. Մանուկեանը, Հիւսիսային Ամերիկայի Արևելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեանը, Հարաւային Ամերիկայի Հայոց Հայրապետական Պատուիրակ Գերշ. Տ. Բարգէն Արքեպս. Ապատեանը, Իրաքի Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Ասողիկ Արքեպս. Ղազարեանը, Հիւսիսային Ամերիկայի նախկին Առաջնորդներ Գերշ. Տ. Տ. Տիրան Արքեպս. Ներսոյեանը և Սիոն Արքեպս. Մանուկեանը, Եգիպտոսի Առաջնորդական Փոխանորդ Գերշ. Տ. Ջաւէն Եպս. Չինչինեանը և այլն:


* * *

Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան Ալեքս և Մարի Մանուկեան ժառանգաւորաց վարժարանը և Ընծայարանը, Սիոնի բարձունքին կոթողուած իր նորակառոյց հոյակապ շէնքով, ուսումնական վերանայուած արդիական ծրագրով, դասսիսօսական բարձրորակ կազմով և մօտ վաթսուն ուսանողներով կ'ապրի եռանդուն աշխատանքի արդիւնաւոր կեանք մը, կրօնարոյր և խորապէս հայկական մթնոլորտի մէջ:

Ալեքս և Մարի Մանուկեան ժառանգաւորաց վարժարանի և Ընծայարանի նոր յարկին տակ վերսկսած ուսումնական տարեշրջանը թոյլ բարւօք սկիզբ մը քլլայ երկարատև և եկեղեցանուէր կեանքի, յօգուտ և ի պայծառութիւն Հայաստանեայց Սուրբ Եկեղեցիին, բազմաչարչար Հայ ժողովուրդին և ի գոհունակութիւն և փառաւորութիւն Ս. Աթոռիս անգուգական Բարեբար վսեմ. Տիար Ալեքս Մանուկեանի:

«Ձգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէր,
և զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ»:

Ա. Գ.



Ալեքո և Բաթիկ Մամուկչեան փառանկատարաց վարժարանի և Ընծայարանի
1976-1977 տարիշրջանի ուսուցչական կազմը և ուսանողները ի խնդր :

Ա Ժ Դ Ա Յ Ա Կ Ն Ո Ւ Տ Ի Գ Բ Ա Ն Ը

Կրանիդ էր պալատն ամբողջ
Աժդահակին,
Հողէն բըլտած լերան նըման,
Գետի ափին:
Փղակերէ դուռ, մարմար պատեր,
Ծածկուած բուրբ
Քանդակներով վիշապներու,
Երանգներով կապույտ, դեղին:

Մարաստանի արքան հըզօր,
Նըստած էր լուռ
Ոսկեդրուագ գանին վըրայ,
Յափշտակուած խորհուրդներէ
Կննոտ ու սև:
Երաժիշտներ կը շոյէին
Լարերն վինին,
Պարուհիներ վարսերով սև,
Ծալ ծալ իջնող մինչև գետին,
Կը պարէին վըրան գորգին,
Ծիածանուած ոսկեյուշտով:
Կը թրթռային լուսիններ զոյգ
Իրենց կարծիքին:
Բայց մըռայլ էր դէմքն արքային,
Տըժգայն ինչպէս ամպի կըլտօր:

Գրանիկներն ինչն իր ստի,
Կը սանձէին յովազներ գոյգ,
Մեծցած, գիրցած
Գերիներու շաղիւղներէն:

Կեցեր էին արքային դէմ,
Մոզեր, խուրմեր և գուշակներ,
Կնգուղներով դաշուևաճև,
Հանդերձներով կապտաբընեզ
Ու ոսկեկաթ:

Գիշեր երազ տեսեր էր ան,
Ջարհուրելի և անսովոր,
Իրեն կուգար թէ կեցած էր
Լերան մը դէմ հըսկայաճև,
Որու գըլխուն ձիւնն էր նըստեր
Թագի մը պէս յաւերժական:

Կը դողար լեռն իր ընդերքէն,
Կը թռթռէին ժայռերն իրենց
Բաշերն երկաթ,
Ջուրեր փոխած հուն ու ճամբայ
Կը վազէին հառաջով խոյ:
Երկինքն իջած լերան վըրայ,
Յանկարծ հողին կը նետէր իր
Կայծակ գօտին,
Եւ այդ լոյսին մէջ հըրացու,
Կին մը նըստած
Լերան անուռ գահաւանդին,
Հագած ամբողջ որդան կարմիր,
Տունկը որուն կը բուսնի լոկ
Հողերում մէջ Հայաստանի:

Կի՞նն այդ չճնաղ, լուսամարմին,
Գալարուելով ինքն իր վըրայ,
Ծնունդ կուտար,
Երեք հըրեղէն կտրիներու,
Նայուածքներէն որոնց կախարդ
Կը թափէր հուր,
Աշխարհն ամբողջ այրելու չափ:
Մին անոնցմէ հեծած առիծ,
Կը սըլանար նետէն արագ
Դէպի հարաւ,
Երկրորդ ինձ մը սանձակած՝
Կ'երթար հիւսիս,
Իսկ երրորդն այն՝
Սօսեհասակ ու սևաչեայ,
Վիշապի մը մէջքին նստած,
Ջնոքին բռնած բոցէ միգակ,
Գետի մը պէս փրփրակոսակ
Մարաստանին կը մօտեցար:

Երբ լսեցին մոզ ու գուշակ,
Քուրմ, աստղաբաշխ,
Ջարհուրելի յայտնութիւնն այս,
Պահ մը եկան իրարու մօտ,
Հովէն շարժող ծառերու պէս,
Փսփսացին շրթունքներով
Երկաթաեռնէ,
«Երազ մըն է չարագուշակ»

Ըսին բոլոր միաբերում,
«Լեռն այգ հըսկալ
Արարատն է ձիւնապրակ,
Մայրն քաղցրուն է Արմենիան»:

Տեսիլէն վերջ,
Աժդահակի մըտփին վըրայ
Ձեռք մը կախարդ
Քաշեր էր իր գիծը մըտայլ:
Երեք օրեր ու գիշերներ,
Մրդաւանջը վիշապ դարձած
Կաթիլ կաթիլ կը թորէր թոյն
հարն հոգիին
Մարաստանի թագաւորին,
Երեք օրեր՝
Փակուած խորը իր կրռատան,
Ջուրն էր ան աստուածներուն
Ջուարակներ, ցուրտ պարարտ,
Մրմնջելով
Բառեր գազունի, աստեղիմաստ,
Ազերսելու՝
Որ սլատուհան այս վերահաս
Ձորնար հունին սէշն իր գազիր:

Միջօրէին,
Մեկներ էին երբ պայտսէն
Քուրմ, աստղաբաշխ,
Տիգրանուեին,
Դուստր անմամն Հայ աշխարհին,
Քայլած ինչ սէգ,
Այցի եկաւ իր ամուսնոյն
Դէմքին վըրայ արև ու ամպ:
Վարսեր՝ ծալ, ծալ,
Սև ջրվէժ էր իր արեքուն՝
Թարթիչները նետ ու նշարակ,
Աչքեր կրակ,
Դէմքն արևու ճանաչներով
Բանուած համակ:
«Երազ մը սուտ,
հարկանքը խօս գիշերներու՝
Ինչո՞ւ տանջէ հոգիդ այսքան
Եւ դողդէ սիրտդ կազմի
Տարիներով կեցած ընդդէմ
Փոթորիկին ու կայծակին,
Աշխարհային յոյզերու խաժ»:

«Տեսիլէն վերջ, խորհրդաւոր,
Խրոնվայոյց է իմ հոգին,

Գիշերն ինչպէս մահապարտին»,
Յարեց արքան.
«Լայն ամէն օր որ կը բացուի,
Կը ներշնչէ ինծի ստակում,
Գիշեր վըրայ կը թաւալի
Լեցուն, սառած գահանդամքով:
Անգղ է նըստեր արտիս վըրայ,
հարն հոգիիս գիշեր անլոյս:
Կ'զգամ թէ ձեռք մը չարաշուք,
Ճակատագրի թաթի մամն,
Կը ծանրամայ նըստին դէմ
Մեր աշխարհին,
Մինչև երէկ դեռ վարդագոյն»:
Յետոյ կեցաւ պահ մը անխօս
Ըսելիքն իր կարծեա մտացած
Մարդու մը պէս:
Ապա յարեց,
Ջայնին տալով շեշտ մ'ապահով.
«Դուն լաւ գիտես թէ ինչ սիրով
Կը սիրեմ քեզ,
Երազն անուշ իմ երէկուան,
Եւ օրերուս քանը պայծառ:
Հասակդ ազուր ծառ ծիրանի,
Որուն վըրայ կը հասունեան
Օր ու գիշեր,
Միբերն անուշ մեր սիրտերուն:
Բայց կը վախեամ՝
Որ օրերն այս երջանկութեան
Ունեան շուտ իրենց վախճան:
Ամպ է նըստեր արտիս վըրայ
Ծանր ու սև:
Եղբայրդ Տիգրան՝
Թելադրուած իր կնոջէն
Նախանձաշատ,
Մեզ կարծանել արդ կը ցանայ,
Որպէս գի կիմն իր Ջարուեին,
Իրև բամբիշ բազմի գահուն
Լայնածաւալ Մարաստանին,
Որուն վրայ մայր չի մըտներ
Արևն արդար:
Պատանութեան տարիներուն՝
Քեզի տեսայ,
Գետի ակիս իրազներուն իմ ոսկեվազ:
Աստուածներու կամքովն հըզօր
Քեզ հարս առի,
Իմ տէրութեան գանձերն ամէն
Ոտներուդ տակ
Փըռեցի ես իրև աւազ,

Սիրտս պասպակ միայն սիրոյդ՝
 Երջանկութեան մեր ասպագայ :
 Կը յիշես դուն,
 Որոտրդութեան օրն առեղի,
 Երբ որ տէգիս մէկ հարուածով
 Կ'իյնար տապառոտ,
 Կասդած առիծն այն ամեհի,
 Դուն ուզեցիր որ քանդակուի
 Յազքանակն այն,
 Պըզնմասալ շրքամուտքին
 Մեր պալասին :
 Այժմ խռամմին անդիմադիր,
 Կորստական,
 Կը սարսէ գիս երկրաշարժէն
 Դողդողացող լերան մըման :
 Որքան ողջ է եղբայրդ Տիգրան,
 Զըկայ մեզի երջանկութիւն,
 Փառք ու պատիւ,
 Արեւին տակն այս աշխարհին :
 Դուն, միայն դուն, կրնաս փրկել,
 Վտանգին դէմն այս վերահաս,
 Քուն ամուսինն և մեր աշխարհն :

Տիգրամուսին կ'ունկնդդէ լուս,
 Մտածումներն իր ամուսնոյն,
 Մեղրով թոյնով շաղափելուած .
 Կը դողային շրքամմներն իր
 Թեթեւութիւն պէս ծաղիկներու,
 Կարծես երկու ձեռքեր անգութ
 Կը խըզէին թելը սրտին
 Իր կանացի .
 Խորն աչքերուն կը վէտվէտէր
 Ծուրը ցաւին,
 Երակներուն մէջէն կ'անցնէր
 Բան մը օտար,
 Դողովն անհուն արհաւիրքին :

Ապա ճծիմնն ու ստութիւն
 Բացին թել թել,
 Թէգանն իրենց վատախորհուրդ,
 Ածդահակը շըշունջով խուլ,
 Ուզեց որ կինն իր սիրելի,
 Երթար երկիրն իր հայրենի,
 Պարգևներով արքայակամ,
 Հրաւիրելու եղբայրն ու կին
 Որ միասին ըմբոշնէին
 Մարաստանի քաղաք գինին,
 Եւ որսային խռկար ու վիթ,

Անտաններուն մէջ հեռակայ,
 Ինչպէս օրէն է արքայից :
 Յետոյ իջաւ իր գահոյճէն
 Ոսկեհնամանջ,
 Ու լուս քայեց սրահին խոր,
 Հիւսած դաւէն իր գոնուակ :

Տիգրամուսին վշտասարսուտ,
 Կը կարդար միտքն իր ամուսնոյն,
 Յորեկուան մէջ հագած գիշեր :
 Վեհ հով մ'ունէր դէմն իր խոժոռ,
 Քօղին մերկ երկարածալ,
 Խորն աչքերուն արցունք պղտոր :

2

Շաքաթներ վերջ, Տիգրամուսին,
 Կը մեկնէր սունն իր հայրենի,
 Հրաւիրելու Հայ թագաւորն
 Ու թագուսին :
 Իշխաններ և իշխանուսիք
 Մարաց երկրին,
 Ոսկի շղթան կը կազմէին
 Այս շէքերին :

Ածդահակը մինչև սահմանն
 Մարաստանի
 Ընկերացաւ թագուսինն,
 Որ իր աշխտ ճիւղն մըստած՝
 Կը մըմանէր անտաններու
 Դիցուսինն :

Մարաց արքան,
 Արիւսներուն՝ փորագրուած,
 Կը յիշէր ցանկն բնծաններուն
 Ղրկուած Հայոց թագաւորին :
 Ըստ Ածդահակ,
 Որդին հրգօր Կիւսարի
 Եւ թողորդին Դէտվկէսի
 Աշխարհաշէն,
 Գանձատունէն իմ պասպորուն,
 Քեզի սրքայ կը զրկեմ արդ,
 Սուր մը ըմտիր, պերճապատեան,
 Որ այդ սուրով հարուածես միշտ
 Թշնամիներն Արմենիայի :
 Թագուսինն ազնուածին՝
 Ոսկի գօտի և գումարտակ
 Գոհարավառ :

Պալատական իշխաններուն
 Եւ կիներուն անոնց չքնազ,
 Գարեր ընտիր և կերպասներ՝
 Աշխարհներէն բերուած հեռու :
 Ռազմահանդերձ և զրրակներ
 Ձիմուտրներուք քաջատարաւ :
 Եկուր շուտով»,
 Մտերմօրէն կը յարէր ան,
 «Որ միասին կըշռեմք շահերն
 Երկիրներուն մեր բարեկամ» :

Դեմքն էր մըռայլ,
 Հայ սարերու եղջերաւին,
 Ոչ սասաւիւնն
 Շաղով օծուած տերևներուն,
 Ոչ ալ լոյսէն հրապարուած
 Երգն արտայտին,
 Ձէին շարժեր թելն իր սրտին,
 Խզուած այսպէս ձեռքէ մը չար :
 Իր ակամօքին՝
 Մըմունքն էր խոր հէքիաբներուն
 Մեր լեռներուն,
 Հերոսներուն առաջապետին :
 Կ'ընթանային ճամբէն անծայր,
 Պարան մ'իմչպէս սարերէն վեր,
 Սարերէն վար :
 Կը յիշէր օրն այն տարաբախտ,
 Երբ հարս կ'երթար Մարաց աշխարհի :
 Ճամբան էր նոյն,
 Նժոյզներ նոյն փրփրաբերան :

Օրեր յետոյ,
 Կը մտնէին երկիրն Հայոց՝
 Ջանգի մը պէս կախուած կարծես
 Երկիւմներէն :
 Ջոյգ Մասիսներ, մուներ մերմակ,
 Դաշտին վըրայ Արարատեան :
 Ու գարուն էր,
 Լեռներ ձիւնի սաղաւարտով,
 Դաշտերու մէջ կանաչ հեղեղ :
 Խորն ամպերուն կը թւածէր
 Արծիւ մ'անձայն,
 Սաւառնուփ տեղեկ հարբած :
 Տիգրանուտին կը շնչէր խոր
 Օդն հայրենի,
 Անուշահամ ինչպէս գիւնի :
 Կը վերյիշէր կարօտով ստաֆ
 Իր հայրենի ծուխն ու ծխան,

Դաշտ ու անտառ,
 Լիճեր կապոյտ ինչպէս երգա,
 Լեռներն ամպի մշուշին տակ :
 Սանձակասոր գետերն վայրի,
 Մուսք ամպերէն իջած կարծես
 Ինչպէս վիշապ :
 Խղճի ձայնէն յուսաւորուած
 Կ'ուզէր լուսլ
 Լերան արցունք ջուրերուն մէջ
 Մուսք խոռվէներն իր հոգիին,
 Փարիլ հոգին,
 Անիւններուն իր պապերուն,
 Վերածնիլ
 Յիշատակովն անոնց անոնց :

Հորիզոնին՝ դաւին անգէտ,
 Արմաւիրն էր փրճուած խաղաղ,
 Պարիսպներով իր կարմրափայլ :
 Տիգրանուտին աչքերով թաց
 Կը նայէր լուս,
 Լի յուշերով դրբախտին այգ,
 Որ կը դառնար իրմէ իրեն,
 Պատկերն ինչպէս իր սեփական :

Շրքերթն անցաւ
 Պարիսպներէն միջնաբերդին
 Մըտաւ պալատ,
 Առաջնորդուած դիմաւորող
 Հեծեալներէն :

Խորն պալատին,
 Գահուն՝ բազմեր էր Հայ արքան,
 Գըլուխին խոյր աստեղազարդ,
 Իսկ ուսերուն՝
 Պատմունեանը պընեղնուոր :
 Անոր կողքին արքայուհին,
 Հագած համակ որդան կարմիր,
 Մէջքին տեսպետն գօտին արծաթ
 Շուշան մ'ինչպէս,
 Առուի ափին դեռ նոր ծաղկած :
 Սակայն բաւոր գարդերէն վեր,
 Դեմքն իր պայծառ,
 Որու շողէն կը հալէին
 Սիրտեր բաւոր,
 Ստոյցն ինչպէս արևին դէմ
 Գարնանային :

Տիգրանուհին յառաջացաւ ,
 Թիկնաթեթև ու թեթևտոն ,
 Ոգրագուրեց Հայոց արքան
 Ու թագուհին ,
 Ժրպիտ արցունք իրաք խառնած :
 Կարգովն իրենց աստիճանին՝
 Հիւրերն ամէն հրաւիրակ ,
 Խոնարհելով մինչև գետին
 Ողջունեցին Հայոց արքան
 Ու թագուհին .
 Ապա անոնց առջև դրին
 Կնէուած արկղերն ընծաներուն :
 Պալատն ամբողջ ծուփ ծուփ կուգար
 Բերկրապատար :

Յաջորդ օրն իսկ , Տիգրանուհին ,
 Բացաւ սիրտն իր արքայ եղբոր
 Վերքի մը պէս արիւնածոր :
 «Վտանգուած է աշխարհն Հայոց ,
 Մասնաց գըլխուհի մտտեր է ամպ
 Վիշապաճև :
 Մարաց արքան , իմ ամուսին ,
 Ղրկեր է գիս իբրև դեսպան ,
 Կարստարեք մետուած ուղկան ,
 Հրաւիրելու քեզ իր աշխարհ :
 Թէ ընդունիս հրաւէրն իր
 Եւ հեռանաւ մեր աշխարհէն
 Վահագնապաշտ ,
 Պիտի խամրի Արմաւիրի
 Այգին ազուար ,
 Տեղայ սև ձիւն Արարատի
 Վարդեմիին անուշաքոյր » :

3

Աժդահակը հնարքներէն
 Իր վրիպած ,
 Կը գալարուէր ինքն իր վրրայ ,
 Վագրի մտան ,
 Վանդակին մէջ երկաթահիւս :
 Արքան Հայոց ետ էր դրկեր
 Հրաւիրակներն պալատակամ ,
 Զի բացուած էր ծալքն Ենարի
 Դաւադրութեան :
 Տիգրանուհին ետ չէր եկած :
 Խորն հոգիին Աժդահակին՝
 Սիրոյ շիկնումն ու ամօքին :
 Երկնմեներէն վար էր կայտուեր

Գունտը լուսնին ,
 Կ'իջնէր գիշեր ,
 Դրած թաքերն իր զայտի
 Պարիսպներուն :
 Երբ փակուեցան աշխարհ իր մութ ,
 Տեսաւ կինն իր , Տիգրանուհին ,
 Նման այնքան
 Իր երագի չքնաղ կնոջ :
 Բացաւ աշխարհ , ուզեց բռնել
 Պատկերն այդ սուտ ,
 Զեռ էրն սակայն մընացին բաց
 Ստուերին դէմն այդ խաւսափակ ,
 «Յաղթեցիր դուն՝ սիրելիդ իմ
 Արդ թշնամի » ,
 Մրմնջեցին շրթունքներն իր :

4

Շարաթներ վերջ , արքան Հայոց
 Յանկարծակի ,
 Ներս կը մտնէր սահմաններէն
 Մարաստանի :
 Իր հետն էին գեղարդակիրք ,
 Աղեղնաւարք թեթևազէն ,
 Եւ այրուձին ,
 Վահաններով պղնձակուտ :
 Կոխկրտելով դաշտ , լեռ ու ձոր ,
 Մացառ ու մար ,
 Յառաջացող բանակն ստուար ,
 Մարերէն վար հոսող մերմակ
 Հեղեղի պէս՝
 Կը մտնեմար Եկպատանին :

Տիգրան ձիւն վըրայ մերմակ
 Ճախրապաց ,
 Կ'առաջնորդէր բանակն Հայոց ,
 Արևն ինչպէս ամպերու տակ :
 Իր ուսերուն՝ լայն ծիրանին ,
 Կուրծքին վըրայ մարմանդն սակի
 Եւ գլխուն թագ ,
 Յակնթաշոյ ծապերով թանկ :
 Արքային հետ կը վագրէին
 Զօրավարներ սպառազէն :

Երբ մտնեցան Եկպատանին ,
 Տեսան թէ փակ էին բալոյր
 Դարպասները պարիսպներուն ,
 Միջնաբերդին :

Քաղաքն ամբողջ,
 Դարան մտած գագանի պէս
 Կը շողացնէր ակռաներն իբ,
 Պարիսպներէն դուրս արձակուող
 Նետերով բիւր :

Հայոց արքան բանակովն իր,
 Շրջան ըրաւ երեք անգամ,
 Քաղաքին շուրջ :
 Կը հնչէին փողերն ուժգին
 Թնդացնելով երկինք, գետին :
 Յետոյ կեցած ասպանդակին՝
 Գռուաց յանկարծ .
 « Հրաւերիդ եկայ սեա ,
 Նեմզաշաիդ Մարաց արքայ ,
 Որ միտսին պարպենք բաժակ
 Ինչպէս ըսեր էիր արդէն
 Դաւադրաբար :
 Պարիսպներու ետին ինչու
 Կը պահուըտիս ,
 Եթէ քաջ նս ելիր մարտի ,
 Վատախորհուրդ ու տմարդի » :

Առաստազը կը պատռուէր
 Կարծես երկնի ,
 Ձայնէն անեղ Հայ արքային ,
 Կը դողային ,
 Պարիսպները միջնաբերդին ,
 Հողմատարուա ինչպէս սօսի :

Իրուքիւնը քեռով երկաթ ,
 Կը ծանրանար սիրտերու խոր ,
 Ժամանակը կարծես նորէն
 Ատեր էր կանգ :

Յետոյ տեսան որ կը բացուէր ,
 Միջնաբերդի դարպասը մեծ ,
 Եւ Աժդահակն հագած գրեհ ,
 Ձեռքին՝ կեռ թուր ,
 Կուգար անեղ մեծամարտին :

« Եթէ նոյնիսկ ըլլաւ աստուած ,
 Հագած մարմին ,
 Յարեց գռռոզ արքան Մարաց ,
 Կեցած մէջտեղն հրապարակին ,
 « Ձեռս ազատիր իմ այս սուրէն ,
 Որ ճեգի պէս հարիւրներու
 Գըլխուն քափեք է իր շանթեր :

Եկպատանի պարիսպին տակ
 Պիտի գրտնես մահըդ անարգ » :

Տիգրան գտաուած իրեններէն ,
 Որսը տեսած վագրի նման ,
 Գըշեց իր ձին ու մտոնցաւ
 Դանրագրահ Աժդահակին :
 Հայոց արքան
 Չունէր գրահ ոչ վլ վահան ,
 Ձեռքին՝ ունէր սուր մը միայն :
 « Վիշապներու կաթով սնած
 Դուն ռերածին ,
 Մարաստանի իժերն ամէն ,
 Չունին այնքան թոյն մահացու
 Որքան ունիս դուն սիրտիդ մէջ :
 Պիտի պատռեմ պարկն այդ ժահրին ,
 Որմէ չարիք հոսեցաւ միշտ » :

Շառագաձայն մերկացան գոյգ
 Սուրերն իրենց պատեաններէն ,
 Դողդեղով սիրտերն ամէն
 Դիտողներուն :
 Երեք անգամ շրջան ըրին
 Իրարու շուրջ ,
 Հարուածն իրենց արժեցնելու
 Ռազմափորձով :

Աժդահակի աչւըներէն
 Կը կաթէր թոյն .
 Յիշեց երազն իր չարաշուք ,
 Ու ստոնցաւ
 Երակներուն մէջն արիւնն իր :
 Բախտին աստուած
 Եթէ ժրպտիլ չուզէ մարդուն ,
 Որձափարը մամ կը դառնայ
 Սուրին առջև թշնամիին :

Իրիկնային արևին մէջ ,
 Կը շանթէին սուրերն անոնց .
 Փռշի մը թուխ ամպի նման
 Կը շղարշէր երկինքն ամբողջ :
 Կրակներէն հարուածներուն
 Կը հալէին սուրերն անոնց ,
 Կը մրնային կոթերն միայն
 Իրենց ձեռքին :

Տիգրան յանկարծ ,
 Իրեն յատուկ յանդգնութեամբ

Խոյացաւ իր ռախիմ դէմ,
Նետեց ձեռքն իր անոր սէջքի
Շուրջն ոլորուած գօտեփռկիմ՝
Եւ վար մետեց գայն իր ձիւն :
Փարատեցաւ երբ աչքերէ
Անպն փռչիմ,
Տեսան բոլոր գետիմ փրոռուած
Ածղահակի քնկեցեղան դիմ :

Մեծաւեծմեր եկպատանի,
Բերիմ յետոյ գանձեր, ռսկի,
Եւ յարգանքով
Խոնարհելով մինչև գետիմ,
Դրիմ գանձէ Հայ արքայի
Ոտքերում դէմ :

«Գահը իմս է» յարեց Տիգրան
«Իսկ երկիրը գաւակներում
Իր պատուական :
Պատիժն ու վարձք աստուածմերու
Գործն է միայն,
Բայց յազբողիմ իրաւունքն է
Յազբանակովն իր արեծալ» :

Ապա բեռցուց՝
Ածղահակի անկեղան դիմ
Ոսկեճամուկ երկվարիմ,
Ու բերաւ գայն երկիրն Հայոց,
Իրեկ աւար յազբանակի :

Լեռնանցմերէն ու դաշտերէն
Կ'արձագանգէր
Երկարահունչ ձայնը փողիմ,
Միախառնուած քայլերուն հետ
Սմբակածեծ այրուձիիմ,
Հեռուներէն երոչակելու
Յազբանակը Հայ արքայիմ :

Քառսուն օրեր, տիւ ու գիշեր,
Քաղաքն ամբողջ Արմաւիրի,
Երգով, պարով,
Ձիարշուով աւանդական,
Տօնախմբեց
Յազբանակը հաննարիմատ
Ու քաջագէն իր արքայիմ,
Որ գիտցած էր դաւը պատժել,
Դիւցագնի մը վայել փառքով :

ԵՂԻՎԱՐԴ



ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՍԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

228. ԳԱՒԱՆԱԿԱՆ ԿԵՏ. Վերադառնալով դաւանական տեսակէտին, պէտք է դիտել տանք թէ այս խնդրոյն վերաբերմամբ տարբերութիւն մը կայ Հռոմէական վարդապետութեան և մերիկին միջև, և առ Հասարակ արեւմտեայց և արեւելեայց միջև: Վասնզի մինչ Լատինները զատաստանը կատարուած կը համարեն, յճիւրը արձակուած, սուրբերը փառաւորուած, երանական տեսութեան մէջ հաստատուած և իբրև սեփական արժանիքովը և իրենց առաւելագոյն արդեանց գորութեանը կարող նպաստելու մարդոց՝ առաջի Աստուծոյ Աթոռին, մեր Եկեղեցին յճիւրն ու փառքը վերջին զատաստանին կը թողու, և սուրբերը կը նկատէ իբրև փառաւորուածներ Աստուծոյ Աթոռին առջև, և իբրև ընտրեալներ և՛ պատրաստուածներ փառքի, բարեաց յոյսով հանգչած երկնից օթեաններուն մէջ: Ու թէպէտ Եկեղեցին գիտէ թէ մարմնոյ կեանքէն ետքը կը դադրի անհատական գործունէութիւնը, և իւրաքանչիւր ոչ կը մնայ հոգեկան այն վիճակին մէջ զոր ունի մասնուան թուլէին, բայց ստիկա չարգիտք որ աղաւթեան վիճակի մէջ գտնուողները կարող լինին Աստուծոյ մատուցուած իրենց աղօթքներուն մէջ նպաստաւոր ըլլալու մարդոց, երբ յօժարին այդ բանին, կամ երբ մէկը խնդրէ զայդ իրենցմէ: Ասով աւելի ևս կը հաստատուի այն նմանութիւնը զոր ցոյց տրուինք վերև ընդմէջ բարեբնութեան խնդրուած աղօթքին և այն աղօթքին զոր կրնանք խնդրել արդար ննջեցեալներէն, անոնց հայցուածները և մաղթանքները համարելով արժանաւորագոյն և արժանիքովունակ:

229. ՊԱՇՏՈՆ ՆՇԽԱՐԱԾ. Սուրբերուն ընծայուած յարգանաց կամ պաշտամանց մէջ, աօներէն և աղօթքներէն ետքը կայ զեռանոց նշխարներուն կամ պատկերներուն

մատուցուած մեծարանքը: Ինչ որ հիմին և սկզբունքին մէջ օրինաւոր է, կը տարածուի նաև պարագաներու վրայ: Այս սկզբունքով կը վարուինք պաշտամանց վարդապետութեան մէջ, երբ բուն ստարկային պատշաճ եղածը կը տարածենք անոր պարագայից վրայ ևս: Սուրբերուն պաշտօնը և յարգութիւնը ընդունեցինք ի շնորհս Քրիստոսի, Նշխարներուն և պատկերներուն պաշտօնն ու յարգութիւնը ևս կ'ընդունինք ի շնորհս սուրբերուն և իբրև նշանակ իրենց անձնաւորութեանց: Նշխար ըսելով նախ կ'իմանանք անոց մարմիններու մնացորդները, ինչպէս ոտկը, աճիւն, երբեմն նաև մազիքը և մորթը, և արինազանգ իբրբը որոնք կը նկատուին իբրև մասունք մարմիններու զորս անոնք կրեցին և որով գործեցին արդարութիւնը կամ զորս պատարագեցին արդարութեան համար: Նշխար ըսելով զեռ երկրորդաբար կ'իմանանք նաև անչունչ այն իբրբը զորս գործածեցին անոնք իրենց կենդանութեան, ինչպէս են թուլ գետները և այլն: Նմանապէս անոնց մարմինն հետ չգիման մէջ եղած իբրբը, ինչպէս են տանջանքի գործիքները, ու այն իբրբը որոնք անոնց նշխարներուն հպած են, ինչպէս շիրիմներու բեկորները, գերեզմանի հողը և այլն: Անշու՛տ իբրբը միայն յիշեցինք, զի շնչաւորները — կենդանիները և մարդիկ — իրենց ընտրութենէն է որ կը գտնեն իրենց արժանիքը և ոչ թէ յորը հետ ունեցած իրենց շփուածէն: Այս պատճառաւ կը պատուուին տանջանքի գործիքները, բայց ոչ տանջող ձեռքերը: կը յարգուին սուրբերու հանդերձները, բայց ոչ երբեք անոնց պաշտօնեաները կամ ծառաները: Այս կանոնը Եկեղեցին չէ որ կը յօրինէ, այլ կենցաղակոտն և սովորական օրինակէն կ'առնէ զայն:

230. ՀԱՏԱԿՈՏՈՐՆԵՐ. Ծանօթ է թէ Ա

րեմուտքի մէջ նորադանդ Լուսերականները ահադին պաշար յարուցին նշխարներու պաշտօնին դէմ, զարգացած այն ծայրայեղ եռանդին համար մասնաւանդ զոր Հոռոմէական Եկեղեցին ցոյց կու տար մասունքներուն նկատմամբ, զոր աւելի աստուկացուց երբ Պաշակիրները Արեւելի դարձին ըստ ի վեր նշխարները քիչին միասին, առանց գիտնալու թէ ուսկի՞ց առած էին զանոնք և նոյնիսկ թէ ո՞ր սուրբերունն էին: Նշխարամուլական այս շափարանցութեան ուրիշ պատճառ մը ձգան Հրդոմի գետնազամբանները, ժանտաւանգ երբ նորանոր խուզարկութիւններ ի յոյս հանեցին ըստման ի սոսկերտներ, որոնք ամէնքն ալ համարուեցան սուրբերու ոսկորներ. և որովհետև անունները յայտնի չէին, աւելի կամ ճշտագ անուանակոչութիւններ անոնց համար: Հետև մեղմէ պաշտպան Կառնի. արդարեւ մոլորաւոր պաշտամունքներու. դեղծունիները չեն կրնար ստիպել մեզ ճշմարտութիւնը չտեսնելու:

Մեր մէջ ալ կան նշխարաց յարգութեան հետքեր, Հովիտիմեանց և Գալիսիանոց յիշարանէն մին յև Լուսաորայէն տոճարները, ուր հաւարուեցան Կարապետի և Աթա. նաղինէի նշխարները: Բայց ուր էր որ այն ձևն ու կերպը զոր ի գործ դրաւ Լուսաորի, ի նուր զարժանի ծածկելով զանոնք և պիմարդեայ շիրմներ գծելով անոնց վրայ, պաշտած ըլլար ընդմիշտ մեր մէջ, և չերեւէին թանկագին ու ճարտարագործ տիկիներու մէջ փակուած մասանց փշուրներ:

231. ՊԱՏՄԱԿԱՆ ՅԻՇՈՒՏԱԿՆԻՐ. Բայց ինչ որ ալ ըլլայ, դաւաճական տեսակէտով անըդունելի ոչինչ կայ այս մասին: Սուրբ Գիրքը, Ս. Հայրերը, Եկեղեցական աւագութիւնը և աստուածաբանական փաստը կը հաստատեն նշխարներու յարգական օրինաւորութիւնը: Աւետարանը ցոյց կու տայ տեստեսա կինը, որ ճատուցեալ յետոյ մերձեցաւ ի դորչակ հանդերձից Քրիստոսի (Մատթ. Թ. 20), և Աւետարանի պատմութիւնը կը յայտնակէ ըստման Երուսաղէմացիներ, որ նք հրապարակները կը բերէին զհիւանդս, և դնել պատարակօք և մահճօք խրեանց, զի ընդ անցանին Պետրոսի՝ դոնէ Հոսիանի նորա հասցէ ուժեք ի նոցանէն (Գործք. Ծ 15). ու Եփեսացի հաւատացեալներու համար կ'ըր-

ուի. «Ք Հրեանդս տանել ի քրտանէ նորա թաշկինակս կամ վարչամակս, և մերժել ի նոցանէ ատրոնն» (Գործք. ԺԹ 12):

Փոյթը զոր նախնի հաւատացեալներ ցոյց կու տային վկաներուն նշխարները թաղելու և պատուելու համար, և հալածողներուն հակառակ ջանքը՝ ճոյսակուր ընկղմումով կամ հրակէզ սպառումով ջնջելու ճարտիրոսաց մարմինները, խափանելու համար հաւատացեալներու յարգութիւնը, սրբոց դերեղմաններուն վրայ կամ կողքին կանդտուած մատուցները, վկաներու շիրմներուն վրայ դրոշմուած արմաւենիք ոտտերու նշանները և տէրունական ոկգրատատերը՝ որոնցմով հաւատացեալներու յարգանքէն ժատանսիշ կ'ըլլային ընտրեալներու զամբարանները, ծխական համարչըր զոր անոնց ոսկորներուն կու տային հուստացեալք և դեռ ուրիշ բազմազան պարագաներ և հետխոսակամ նշաններ որոնք կը քաղուին զրութիւններէ և արձանագրութիւններէ, կը բուեն հաստատուում համար թէ Եկեղեցոյ մէջ հաւանդ է նր, խարներու յարգութիւնը. և ըստ եկեղեցական օրէնքի ցուցմանց, ինչ որ հաւանդ է և նախկին՝ է ճշմարտ: Եւ իբրևամբ խիզ, զի ինչպէս նշխար համեայն իր սիրոյ և մեծարանաց հաւատովքը իրեններուն կը փութայ յայտնել՝ անոնց նշխարներուն ընձեռուած պատուայ և գործով նշանակեցով, նոյնպէս նաև Եկեղեցին պարտաւոր է նոյնը ընել, ի՞նչ ըմբռնումին համեատ, իրեններուն:

232. ՊԱՏՏՈՆ ՊԱՏԿԵՐՈՒՅ. Պատկերներու ինդերն ալ խօսից կարգին կը պատկանի:

Յայտնի է այն մեծ դրդիւնը զոր պատկերամարտութեան աղանջը հանց ը դարձն, և Նիկիոյ Բ Ժողովին վճիռը 787ին, զոր Յոյնք և Լատինք ընդհանրական կը համարին: Յայտնի են նոյնպէս այն անցքերը որոնք այնուհետև պատահեցան մասնաւանդ Արևելքի մէջ, փոխադարձապէս զօրանալովը պատկերները յարգողներուն և անարդողներուն: Այստեղ ծայրայեղութեան խորշիւ. երբ կը խորհիւք թէ Եկեղեցոյ մէջ պատկեր պահելով կուպալտ եղած չենք ըլլաք, միևնոյն տոտն չենք կրնար նաև ընդունել թէ պէտք է անխտիր ամէն տեսակ պատկեր մտցնել Եկեղեցոյ մէջ, և կամ պատկերներով խճողել տաճարները:

Մեր Եկեղեցին կը խորշի կռուել և քանդակեալ պատկերներէ, տառօրէն պահելով Հին Օրէնքի արգելքը այս մասին. «Մի՛ արասցես դու քեզ կուռս» (Ելք, Ի 4), այսինքն՝ պատկերս կռուայս: Իսկ գործածած նկարներուն մէջ միշտ կը զանազանէ ործելուն կամ սպասներուն վրայ իբրև զարդ դրածները՝ բուն նուիրական պատկերներէն, որոնք իւրաքանչիւր տաճարի մէջ որոշ թիւով, այսինքն ասկաւաթիւ պէտք է լինին: Դարձեալ, այս վերջինները պէտք է ըլլան կամ Փրկչական և կամ Փրկիչը Աստուածածնի կտու, և ոչ թէ միայն Աստուածամայրը կամ օւրբերը: Որովհետև նոյնիսկ սուրբբուն նուիրուած տաճարներուն մէջ, սեղանին վրայ եղած պատկերք միշտ Փրկչինը կ'ըլլայ Աստուածամօր հետ միասին: Այս վերապահումներով Հանգերձ, սբոց պատկերներուն հակառակ չենք վարդապետանք տեսակէտով, և պատկերայարգները կամ պատկերապաշտները կուսպաշտ նկատելը համաձայն չենք գրուելը ողջմտութեան:

233. ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ. Պատկերամարտներուն ամենէն Հօր փաստն էր Աստուածային պատուիրանը. «Մի՛ արասցես դու քեզ կուռս բառ ամենայն նմանութեան որ ինչ յերկինս ի վեր է և որ ինչ յերկրի ի խոնարհ և որ ինչ ի ջուրս ի ներքոյ երկրի, և մի՛ պաշտեսցես զնոսա» (Ելք, Ի 4-5): Իսկ պաշտպանները կ'ըսէին թէ ատիկա պատկերներուն համար չէ ըսուած, այլ՝ աստուածներուն, զի պատուիրանէն առաջ որոշ կերպով գրուած է. «Մի՛ եղիցին քեզ այլ աստուածք թաց յինչն», և ի վերջոյ կ'անելցուի. «Զի ես եմ Տէր Աստուած թո, Աստուած նախածոս»: Ի հաստատութիւն նոյն իմաստին՝ պաշտպանները մէջ կը բերեն քերթմէները, որոնց պատկերները Մովսէս դրաւ Տապանակին վրայ (Ելք, ԻԴ, 18), և պղինձէ օճը զոր Մովսէս Աստուծոյ Հրամանով կանգնեց, և նոյնիսկ Տապանակը իբրև պատկեր աներևոյթն Աստուծոյ, որուն կարծես Լազրիական պաշտօն կը մատուցանէին Հրեաները, զոր օրինակ Յեսու, որ Հայաստանաց զհանդերձս իւր և անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր առաջի Տապանակին Տեսոն մինչև ցերեկոյ, ինքն և ծերքն Իւրայելիս (Յես. Ը 6), ինչպէս և Դուռիք կ'երգէր. «Բարձր արարէք զՏէր Աստուած

մեր, երկիրպազէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է» (Սաղմ. ԴԸ 5), ուր յայտնապէս Տապանակին մասին են իր խօսքերը, ըստ այնմ թէ «Ի սրտէ իմում եղև շինել տուն Հանդօտեան Տապանակի ուխտին Տեսուն և կայան ոտից Տեսուն մերոյ» (Ա Մնաց. ԻԸ 2):

234. ԺՈՂՈՎԱԿԱՆ ՈՐՈՇՄՈՒՆՔ. Եկեղեցական աւանդութենէ եղած փաստերը միւս նիկիոյ Ժողովին որոշման մէջ են, ինչպէս նաև Հնախօսական բեկորներու մէջ՝ որոնք ամէնուրեք կը զանուին և նորերը միշտ ի լոյս կ'ելլին Հնադարեան մնացորդներու և անբակներու խուզարկութեանց և պեղումներու ընթացքին: Որմանկարներ, վկաներու պատկերներ, Փրկչի և Աստուածամօր պատկերներ կամ զանազան պատմական անցքերու տեսարաններ Հին և Նոր Կտակարաններէն, կենդանիներու կերպարանքներ, խորհրդաւոր նշանակներով բազմատեսակ զարդեր բազմաթիւ են Հին շէնքերու և քրիստոնէական թանգարաններու մէջ. և ստիկա ոչ միայն Լատինաց Արևմտեան աշխարհին մէջ, այլ նաև Յունաց Արևելեան Եկեղեցիին պարագային: Մեր մօտ ալ, զանազան յիշատակարանական մնացորդներու մէջ կը տեսնուին նոյնները. միայն թէ պէտք չէ անդէպ կերպով կատարել պատկերներուն կիրառութիւնը:

Վարէն վեր ելլելով, նախ կենդանիներու և բոյսերու նմանութիւնները իբրև լոկ զարդ, ապա մարդոց և Հրեշտակներու նմանութեաները նոյնպէս որպէս զարդ, ապա անձերու կերպարանքներ և պատմական դործերու ստուերազարդութիւնները ի յիշատակ ասպարաջից, յետոյ սուրբերու պատկերները առանց որևէ յարաբերութեան պաշտամունքի հետ, այլ լոկ իբր յիշատակ, ապա Քրիստոսի խաչին ձևերը: Յետոյ կու գան Փրկչական նկարներ Աստուածամայրով Հանդերձ կամ առանց անոր, օծուած և սեղանի վրայ գրուած:

Մինչև այստեղ յիշուածները մեր Եկեղեցւոյ աւանդական յիշատակութիւններն են: Իսկ եկեղեցւոյ մէջ, զանազան անկիւնները պաշտամունքի համար դրուած և օծուած Փրկչական, տէրուական կամ Աստուածամօր կամ ընտրեաներու պատկերները նորմուտ են, յունականէն փոխադրուած մեր

մօտ : Գալով անպատկեր կռեաներուն կամ քանդակուածներուն, ասոնք տակաւին չեն մուծուած մեր մէջ, և առատօրէն կ'երևին մանաւանդ լատինաց եկեղեցիներէն ներս :

Ասոնց մասին հարկ չկայ խօսելու, զի մեր նպատակն է մեր դաւանութեան հետ առընդօթիւն ունենցող պարագաներ միայն նկատի ունենալ :

Յ Ա Ղ Ա Գ Ս Ա Ն Դ Ե Ր Ձ Ե Լ Ո Յ

235. ԻՄԱՍՏԱՍԻՐԱՎԱՆ ԳՐՈՒԹԻՒՆ.
Հանդերձեալ կեանքի ճշմարտութեան մասին կը խօսի իմաստասիրութիւնը, երբ հոգիին աննիւթականութեան և անոր անմահութեան վրայ կը ճառէ և կը հաստատէ թէ բանական մարդը չունչանար հոգիին՝ մարմինէն ելլելէն և մարմինին դիակնանալէն ետքն ալ, և թէ անդշիբիմեան կեանք մը կը սպասէ անոր՝ հանդերձեալին մէջ :

Յայտնապէս նոյնն է ջրիստոնէական մարգապետութիւնն ալ :

Աւելորդ աշխատութիւն մը պիտի ըլլար Ս. Գրոց վկայութիւններով հաստատել այս ամէնը : Աւելի կարևոր պիտի ըլլար մեզի համար՝ ջրիստոնէական յայտնութենէն իմանալ թէ ի՞նչ է հանդերձեալ կեանքի վիճակն ու կացութիւնը, հատուցման ի՞նչ օրէնք կայ, ե՞րբ և ինչպէ՞ս պիտի կատարուի ան, ո՞ւր են հոգիին օթեանները և որքա՞ն են անոնք, մարմիններն ալ պիտի մասնակցի՞ն այդ եղելութիւններուն և ի՞նչ կերպով : Սակայն պէտք է կանխենք ըսելու թէ բովանդակ ջրիստոնէութիւնը միևնոյն կերպով չի խորհրդարար այս խնդրին մասին, և Արևմտեան ու Արևելեան Եկեղեցիները կ'անջրպետուին իրարմէ՝ լիազոյն հատուցման ժամանակակէտի սկզբնաւորութեան մասին :

236. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ. Կարելի չէ այստեղ յառաջ բերել այն զանազան դրուութիւնները և կարծիքները, որոնք միշտ ալ դրուութիւն ունեցած են, և մոլորը, երկրայական ու սուղիղը զատել իրարմէ, և յետոյ ձեռնարկել հաստատելու մեր Ուղղափառ Եկեղեցւոյ դրութիւնը :

Բայց որովհետև բազմամասն է հարցը, և մահուան բոլորէն կը տարածուի մինչև ցաւաւորեան ժամանակաց, և իւրաքանչիւր շարժափոխի պէտք է նիւթերու կարգին համեմատ կրկնել կարևորները, այս պատճառաւ դիւրազոյնին և համառօտագոյնին մտադիր ըլլալով՝ զանց կ'ընենք կանխաբանական ընդհա-

նուր տեսութիւնները, և քայլ առ քայլ յառաջանալու համար կ'ուզենք խօսիլ զանազան կարծիքներու բազմակերպ մասերուն վրայ :

237. ՎԱՆՃԱՆԱՐԱՆՈՒԹԻՒՆ. Պարտինք յիշեցնել թէ այստեղ մենք պիտի խօսինք առաքելական խօսքերուն մեկնութենէն ծագած Վախճանաբանութեան (Eschatologie) մասին, որ կը վերաբերի աշխարհի մօտալուտ վախճանին և Քրիստոսի գալուստին նկատմամբ առաջին ջրիստոնէաներու ակնկալութեան՝ զոր անոնք կը կապէին Աւետարանի յաղթանակին և փառաց լրման, նմանութեամբ Մեխական փառաւոր գալուստին, ըստ նախապաշարմանց Հրէից :

Մենք այստեղ պիտի չքննենք թէ ի՞նչ է դած է առաջիններուն կարծիքը այս մասին, և թէ արդեօք առաքելական խօսքերը ստորդիւ այդպիսի գալուստի՞ մը կ'ակնկալեն : Այլքանր ստոյգ է սակայն թէ ակնկալուած գալուստը մօտալուտ բան մը չեղաւ, և ոչ իսկ ցարդ տեղի ունեցաւ, և նոյնիսկ առարեաններուն համեմատ՝ անորոշ է վերջնական ժամանակը :

Հարկ է որ մենք մեր խօսքը դաւանաբանականին մէջ սահմանափակենք, և ինչ որ հիմա մենք պարտինք իբրև ջրիստոնէական վարդապետութիւն պահպանել՝ զայն միայն յառաջ բերենք : Վախճանական հարցերուն մէջ ոմանք բաժանում մը կը դնեն, այսինքն մարդուն եղածները կը զատեն աշխարհի և դածներէն : Բայց որովհետև երկուքին մէջ իրարու հետ խօսուած կէտեր չատ կան, մենք պիտանի և կարևոր չենք գտնար այդ բաժանումը :

238. ՄԱՀ ԵՒ ՄԱՀԷՆ ՎԵՐՁ. «Կայ մնայ մարդկան միանգամ մեռանիլ» փորձառական ճշմարտութիւն՝ զոր կը լրուսաբանէ յայտնութիւնը, բացատրելով անոր պատճառը. «Մի միջոց մարդոյ մեղք յաշխարհ մտին, և ի մեղաց անտի մահ, և այնպէս յամենայն մարդիկ տարածեցաւ մահ» (Հռոմ. Ծ 12) : Այլուր

ևս կը գրուի: «Գիտեմք զի եթէ երկրաւոր տաճար շինուածոյս զակտեցի, շինած յԱստուծոյ ունիմք, առանց ձեռագործի յաւիտեանական յերկինս» (Բ Կորնթ. Ե 1), ուր այնպէս կ'երևի թէ քնական բան մըն է մարդուն մահը, որովհետև ամէն երկրաւոր ի հարկէ պիտի լուծուի, մեռնի: Անհնար է մեզի շնորհ տովանիլ թէ ամէն նիւթական բնութեան համար բնական է իր լուծումը, և թէ ըստ այսմ մարդուն համար ալ բնական է մահը: Միայն թէ Մենդոց Գիրքէն կ'իմանանք թէ առաջնաստեղծ մարդուն վիճակը զերծ պիտի ըլլաք մահէն ոչ թէ իրաց կարգին համեմատ, այլ Արարչիչին գերբնական շնորհին համեմատ: ու երբ մեղքին պատճառաւ դադրեցաւ զերբնական շնորհը, մարդը դարձեալ իր բնական վիճակին մէջ ինկաւ և յարդրոց մահը իբրև պատուհաս: Ըստ այսմ մահը կը կոչուի 'խիճան բնական և նոյն ատեն արդիւնք դերբնական:

239. ՄԱՀ ԱՄԵՆՈՒՆ. Արդեօք բոլոր մարդիկ պիտի մեռնին, թէ ոչ պիտի ըլլան այնպիսիները որոնք պիտի չմեռնին, այլ ա'յս կենսաբան նոյնիսկ պիտի փոխադրուին հանդերձեալ կեանքը, առանց միջանկեալ մահուն: Պօղոսի վերև յիշուած խօսքերը երբ բառացի իմաստով առնուին, կը թուին մերժել որևէ քայտառութիւն: Իայց որովհետև Առաքեալը այլուր ինքն իսկ կ'ընդունի ոմանց առանց մահը ճաշակելու աւելից հանդերձեալը փոխադրուիլը, և կ'ըսէ թէ «Մեք որ կենդանիք եմք, մնացեալք ի գալստեան Տեառն ոչ ժամանեմք ննջեցելոցն», և թէ «Մեք որ կենդանւոյն մնացեալ կ'ըմք, նոքօք հանդերձ յափշտակեսցուք ամպովք ընդ առաջ Տեառն յօդս» (Ա Թես. Դ 14, 16), այս պատճառաւ շատերուն լաւագոյն թուեցաւ ըսել թէ մահ չճաշակողներ ալ պիտի ըլլան: Եւ այս մըտքով է որ Հանգամակին մէջ կ'ըսենք թէ «Գալուց է ի դատուի զկենդանիս և զմեռելոյս»: Աստուհանդերձ, մինչ Արևելիայք ոմանք կ'ընդունին ոմանց կենդանի մնալը, Արևմտեայք ընդհանրապէս կ'ըսեն թէ մնացածները, թէև վարկինական մահ մը պիտի ունենան, բայց զերծ պիտի մնան բնդհանուր դատանիքէ': և մահուան պատուհասէն:

Այս կարծիքներու տարբերութիւնը յառաջ կու գայ Պօղոսի կարգ մը խօսքերուն

տարբեր ընթացուածներէն, զի ուր ուր մեր սովորական օրինակները ունին «Ամենեքեան ննջեսցուք, այլ ոչ եթէ ամենեքեան նորոգեսցուք յանկարծակի ի փող յետին, քանզի փող հարկանի» (Ա Կորնթ. ԺԼ 52), ուրիշ կերպ կ'ընթանան ուրիշներ: Յոյնը ունի «Ոչ ամենեքեան ննջեսցուք, այլ ամենեքեան նորոգեսցուք յանկարծակի յական թօթափել ի փող յետին, քանզի փող հարկանի» ևայլն, իսկ Լատինը ունի «Ամենեքեան յարիցուք, այլ ոչ ամենեքեան նորոգեսցուք: Յանկարծակի, յական թօթափել, ի փող յետին, քանզի փող հարկանի» ևայլն: Յոյնը ըստ իմաստի համաձայն է մերիներն, և տարբեր է տնայրութեամբ միայն: իսկ Լատինն ընթացած օտարացած կը թուի բնագոյն, որուն աւելի կը թարմարի հնագոյն Հայրերուն կարծիքը:

240. ՀՈՒՈՒՄԵՆԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ. Շատ աւելի կը տարբերին կարծիքները երբ պէտք կ'ըլլայ որոշել մարմինէն բաժնուած հոգիներուն վիճակը: Լատին եկեղեցին իր աբսոլյուտ վարդապետութեան համաձայն կ'ընդունի թէ իր մարմինէն զատուած հոգին անմիջապէս կը դատուի և վճիռ կ'ընդունի իր գործերուն համար: Եթէ ըստ ամենյեի արդար է, նոյն յետայն կը ժառանգէ արքայութիւնը, որ է Աստուծոյ երանաւէտ տեսութիւնը: Եթէ ծանրը յանցանքներով մեղաւոր է՝ դժոխքի կը դատապարտուի: Իսկ եթէ ոչ մին է և ոչ միւսը, այլ թեթև մեղքով մեղաւոր է կամ չէ լըրացուցած ծանր մեղաց ապաշխարութիւնը, կը դատապարտուի Գաւորանի մէջ մնալու ժամանակաւորապէս, մինչև լրումը սահմանուած արգելականութեան, որմէ վերջ իսկոյն արքայութիւն կը փոխադրուի, մաքրուած և արդարացած: Իսկ եթէ անկնունք մահուկ է, առանց ներգործական մեղքի, կը մընայ Լիմպոսին մէջ, որ է տեսակ մը արգելաբան մշտնջեալու որ կրկման, առանց տանջանքի: Լրացնելու համար այս խնդրոյն վերաբերած հարկաւոր տեղեկութիւնը, պէտք էր ըսել թէ իւրաքանչիւր անձի համար կատարելի առանձնական դատաստանը ուր պիտի կատարուէր արդեօք, հոգիին մարմինէն իրան տեղը, թէ հոգիին իրեն յատկացեալ տեղը փոխադրուելէն վերջ: Դարձեալ հարկ էր որոշել թէ ո՞վ պիտի ըլլայ դատարարը: Աստուած ինքնին, մարդեղութեան խոր-

հուրդէն անկախաբար, թէ Քրիստոս, իբրև մարդացեալ Որդի Աստուծոյ: Այս վերջին ենթադրութեան պարապմունչ, հարկ է արդեօք կարծել թէ Քրիստոս իւրաքանչիւր վախճանեալի քով պիտի անցնի և դատաստան կարգէ իւրաքանչիւրին համար: Հոռոճականները թէև կ'ընդունին այս վերջին պարագաները, բայց չեն պնդիր թէ սոսո՞յց են անո՞ք հաստատելի ստուգութեամբ, ինչպէս կը պնդեն վիճակներու անմիջական որոշման մասին:

241. Հին ՎԱՐԳԱՊԵՏՈՒԹԻՒՆ. Բայց այս չէ հին վարդապետութիւնը, որ երբեք չճանչցաւ առանձնական դատաստան իւրաքանչիւր վախճանեալի համար, այլ ճանչցաւ այն դատաստանը միայն որ ներկայ կեանքի վախճանին պիտի կատարէ Քրիստոս մարմիններու յարութեան ատեն, և այն ատեն միայն պիտի տայ վճիռը արքայութեան յաւիտենական երանութեան և դժոխքի յաւիտենական տան ջանաց համար: Այդ երկու վերջնական օժտութիւններէն զուրկ ուրեմն պէտք է կենաց ուրիշ տեղ մը, ուր սպասեն մարմինէն դատուած հոգիները. այդ տեղն է այն, զոր սովորաբար կը կոչենք կայան հոգեոց: Իսկ որովհետև պատշաճ չի թուիր այդ կայանին մէջ խառնաձևութիւն կերպով ընդունիլ արդարները՝ ամբարշտներուն, և սուրբերը՝ անսուրբներուն հետ, ուստի, թէև ոչինչ յատկօրէն դիտենք վարդապետական տեսակէտով, բայց անբախտար չի թուիր մտածել թէ եթէ ոչ դատաստանով և որոշումով, բայց պոնէ ընտրանքով կը պահուին նմանները նմաններու հետ. մինչ բողոքովին անդէպ պիտի ըլլար Ըսել թէ ամէնքը առ հասարակ կը տանջուին նոյն անորոշ տագնապով, հասասարակէս հնարաւոր տեսնելով իրենց անձերուն համար սուրբերը՝ տանջանքները, և անսուրբները՝ երանութիւնը: Այս պատճառաւ, ընդհանրապէս կ'ընդունուի իւրաքանչիւր հոգիի տրուած ժողով լուսաւորութիւն մը իր վիճակին մասին, որով դատաստանի օրէն ալ առաջ արդարները կ'ուրախանան երանութեանց ակնկալութեամբ, ինչպէս ամբարշտները կր տխրին տանջանքի երկնալուով:

242. ՀԱՆԻՅԻՐՁԵԱԼ ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳԱՄԱՆՔԻՆԵՐԸ. Եւ որովհետև անյայտ ապաւ-

նինքնու վրայ կը խօսինք, որոնց մասին ոչինչ կայ յայտնութեան մէջ, այս պատճառաւ պէտք չէ զարմանալ եթէ երբեմն ոմանք ըստ իրենց տեսութեան տարբերեալ գրութիւններ կազմեն: Բայց այդ տարբերութիւններուն մէջ իսկ բան մը կայ որ հաստատուն է մեզի համար իբրև կոռուան ոտք. այդպիսի իրողութիւն մըն է այս թէ Հոռոճականաց առանձնական ըսած դատաստանը և անմիջական հատուցումը արտաքայն է Աւետարանի վարդապետութենէն, և հետեաբ օտար՝ Ուղղափառ Եկեղեցւոյ հնաւանդ դաւանութեան: Սուրբ Գրքէն յայտնի վկայութիւններ կը հաստատեն զայդ, ինչպէս Պօղոսի խօսքերը. «Կայ և մնայ ինձ արդարութեան պատկն, զոր հատուցէ ինձ Տէք յաւուր յայնմիկ արդարն դատաւոր. ոչ միայն ինձ, այլ և ամենեցուն որք սիրեցին զյայտնութիւն նորա» (Բ ՏՄԺ. Գ 8). «Հաստատեաց օր, յորում պարտ է դատել զաշխարհս արդարութեամբ» (Գործք. ԺԷ 31). «Ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի ատենին Քրիստոսի, զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով զոր ինչ գործեաց յառաջ՝ եթէ բարի և եթէ չար» (Բ Կորնթ. Ծ 10):

Այս ժողով կ'իմանան նաև ոմանք այս խօսքերը. «Մոքս ամենեքին վկայեալք ի հաստատոցն, չև ևս ընկալան զաւետիսն, Աստուծոյ փօսն մեր յաւապոյն համարեալ, զի մի՛ առանց մեր կատարեցիմ» (Եբր. ԺԱ 39): Ու Յովհաննէս կ'ըսէ. «Յորժամ նա յայտնեցի, նման նմա լինելոց եմք, զի տեսանելոց եմք զնա որպէս և էն» (Ա Յովհ. Գ 2): Քրիստոս ինքնին ըսաւ. «Երթամ և պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ զամ և առնում զձեզ առ իս» (Յովհ. ԺԳ 2):

Բայց յայտնագոյն և վճռական է նկարագիրը դատաստանին, զոր ինքն Քրիստոս չարարանքէն քանի մը օրեր առաջ խօսեցաւ, և ուր մի առ մի յառաջ կը բերուին ատենին բացումը, օրէնքներուն, արժէքներուն բաժանումը, զործերուն քննութիւնը և երանութեան ու դատապարտութեան վճիռները և ըսկզմաւորութիւնը հատուցումներուն. մեղաւորաց մտնելը յաւիտենական տանջանքներուն մէջ, և արդարներուն՝ յաւիտենական կեանքը (Մատթ. ԺԵ 31-46):

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊՍ. ՕՐՄԱՆԵԱՆ

(Շար. 23)

ՍԵՆԵԱԿԻՍ ՄԷՋ ԱՌԱՆՁԻՆՆ...

ՀԱՅԿ ՕՀԱՆՆԵՍԵԱՆԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ

Սենեակիս մէջ առանձինն, կը նիրհէ, թիֆ թափէն գատ, ամէն քան,
Յանայս, լապտերիս լոյսը մարած, խոնջէնքէն ետքը օրուան,
Ես կը հսկեմ ցոլֆերուն պատուհանէն թափանցող:

Ուրկէ՞ կու գամ այն ատեն քաղցր յուշերը այսօր. . .
Տեսիլները պայծառ, սպիտակ վարագոյրի երկայնքէն
Դէպի ինձի կը սահին նշոյլներու սանդուխէն
Եւ լուսինն ալ անոնց, կը հիւսէ հանդերձանքներ ժանեակէ,
Ուրկէ՞ կու գամ այն ատեն, երազանքներս անուշ:

Լուսիւնը թեթեւ է, երկնային, եթերական,
Եւ սենեակս կը լեցուի խորհուրդով մը, ու ոչինչ
կը մնայ մտքիս մէջ անձկութենէն որ իրն էր:

Ուրկէ՞ ինձի կրնար գալ երանութիւնը այսօր. . .

Առաւօտը կը մօտենայ, կը հասնի ժամն ուր կարծես
Մեր մեռելներն սիրելի մեզ կը խօսին գազանօրէն,
հազադութիւնն գիշերին կ'ըլլայ այնքան, խոր, այնքան,
Որ կը կարծես ես լսել ձայներ ուրիշ աշխարհէ:

ԱՆՏՐԷ ՏԻԻՄԱ

Թրգմ. Մ. Ե. Մ.



* * *

Ճամբաներու միջև անկոխ,
Ակերուն քով «Տով»ին ջինջ՝
Կ'ապրէր կոյս մ'որ չունէր գովող,
Զինք սիրողներն ալ՝ շատ քիչ:

Մանուշակ մը ժայռի մ' մօտիկ,
Կէս մը պահուած աչքերէն,
Ազուոր աստղի մ' պէս մէկ հատիկ՝
Փայլող երկնի կամարէն:

Եւ ապրեցաւ անյայտ, քիչեր
Իմացան երբ չըկար ան,
Լիւսին գերեզման է իջեր,
— Ո՛հ փոխուեր է ամէն բան:

WILLIAM WORDSWORTH

Թրգմ. Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Ըզֆեզ կ'երգեմ ես նորէն՝
Յաւերժական իմ երազ,
Այս հեռաւոր ակերէն,
Դուն մեր սարգև-պատուհաս:

Որքան հեռու ըլլամ ես,
Այնքան մօտիկ եմ քեզի,
Սիրտըս սիրտդ ողջակէզ,
Թագուհիդ իմ երազի:

Դուն օրօրն իմ մայրական,
Դուն իմ եզրօրը անուն,
Դուն իմ փիւնիկ Հայաստան,
Երգ, Յոյս, Սէր ու Սըրբութիւն:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՐԿՈՍ ՊԱՏԿԵՐԱՅԱՆ

(1651 — 1676)

ԺԷ. Դարու երրորդ քառորդին Կ. Պոլսոյ մէջ նշանաւոր մանրանկարիչ մըն էր Մարկոս, որ ընդհանրապէս կը յիշուի իբրև ծաղկարար կամ պատկերահան: Հայրը կը կոչուէր Բարազամ: Մարկոս ամուսնացեալ էր, և իր որդին Գարրիէլ Դպիր հետեւեցաւ հօրենական արուեստին, և իր կարգին հանդիսացաւ անուանի նկարիչ մը:

Մազկարար Մարկոս ծնած է ԺԷ. Դարու սկիզբները: Իր կեանքի նախնական շրջանին մասին տեղեկութիւններ ի յայտ չեն եկած: Երեմիա Ալէկպին իր Օրագրութեան մէջ կը պատմէ թէ Մարկոսը, 1656ին, մասնակից եղած է այն գաւաղիւր ձեռնարկին, որուն նպատակն էր կախարդական միջոցով մը մեռցնել Եղիազար Վարդապետը (էջ 154):

Դաւադրութեան յայտնուելէն ետք երբ դաւաղիւրներու պետը պատիժ կը պահանջ Մարկոսին, սա կը փութայ երթալ Պուրսա՝ եղածները պատմելու Աստուածատուր Վարդապետին (էջ 159, ապրիլ 21). կը վերադառնայ Կ. Պոլիս մայիսի 8ին (էջ 172):

Նկարիչ Մարկոսի մասին իր բարձր գովեստին հետ, ոյ փաղաքական տողեր արձանագրած է Մարտիրոս Վրդ. Ղրիմեցի, իր Աստուածաշունչին մէջ (Ձեռ. Ս. Յ. թիւ 2561):

Վսիկ նկարող սորին, զարմանալի և անհաս արհեստաւորն Մարկոս, որ էր ի նոյն քաղաքէն Կոստանդնուպօլսոյ, բայց յոյժ ստասաց և խարուսիկ, և իբրև անյազ տղրուկ եկեր զամենայն զկեանս իմ, և ոչ ասաց շատ, ըստ առակաւորն բանի իմաստնոյն.— Հմմտ. Յուլիան Զեռազրաց Անկիւրիոյ, Բ. Ա. ԿԹՂ. Կիւլէսէրեան, Անթիլիաս, 1957, էջ 439-440:

Մազկարար Մարկոս կը վախճանի 1676ին, Կ. Պոլսոյ մէջ, և կը թաղուի Պալլադիոյի Հայոց Գերեզմանատունը: Տապանաքարին վրայ արձանագրուած է.

Դամբարանս գեղազարդեալ,
որդի Բարազամի կոչեալ
ծաղկարար Մարկոսն աստ եղեալ,
հայր մեղայիւ սա ասացեալ.
Թվին ՌձԻԵ (1676):

— Տես Հայաստանի Կոչնակ, 1955, էջ 729-730, Գ. Բամպուքճեան:

Մազկարար Մարկոսի ծաղկած և նկարազարդած ձեռագիրներէն կըրնանք յիշել հետեւեալները՝ Ժամանակագրական կարգով.

1.— Աւետարան, գրուած Կ. Պոլիս, 1651ին, Լեհցի Տիրացու Յակոբ զրչի ձեռքով, Կեսարացի խաչատուր Երէցի համար: Նկարազարդած է Մարկոս ծաղկարար.— Ձեռ. Ս. Յ. թիւ 1970:

2.— Աստուածաշունչ, օրինակուած 1654-1660 տարիներուն, Կ. Պոլսոյ մէջ, Ակնեցի Թամուր գրչի ձեռքով, Երեմիա Չէլէպիի ժօրեղբօր մահտեսի Ամբակումի պատուէրով, ի վայելումն Յակոբայ կաթողիկոսի: Ծաղկած է Մարկոս պատերազան:— Զեռ. Երևանի, Թիւ 348:

3.— Աստուածաշունչ, օրինակուած է Կ. Պոլսոյ մէջ, 1654-1661 թուականներուն, գրչութեամբ Մելիստոն Երէցի, Եղիայի և Ազարիայի, Ղրիմեցի Մարտիրոս Վարդապետի համար: Նկարազարդումը կաաարած է Մարկոս պատկերազան: Զմեռնային նաւարեկութեան մը պատճառաւ զերբը կը փասուի և ծաղիկներուն ու զարդերուն մէկ մասը աւրուելով կը առեղնայ: Ղրիմեցիին քանի մը տարի ետք կը դիմէ Մարկոս նկարչին և վերստին նորոգել կուտայ եղծուած խորաններն ու ծաղիկները: Ստացողին ընդարձակ յիշատակարանը կը կրէ 1670 թուականը, ուր ցաւած սրտով կը պատմէ Ղրիմեցիին իր տանն վեցամեայ վշտակրութիւնը.— Զեռ. Ս. Յ. Թ. 2561:

4.— Մեկնութիւն Երզնգ Երզնյն Գրիգորի Նարեկացոյ, ընդօրինակուած Յովհաննէս Երէցի ձեռքով, 1657ին, Կ. Պոլսոյ մէջ, Մարգիս Աբեղայի համար: Նկարները գծած է պատկերազան Մարկոս.— Զեռ. Ս. Յ. Թ. 1552:

5.— Աւետարան, գրած և ծաղկած է Կ. Պոլսոյ մէջ, 1671ին, Վանեցի խոջայ Պօղոսի համար, ստանալով 200 դռչ. ՚— Զեռ. Վենետիկէ, Թիւ 1987. Բաղմովէպ, 1950, էջ 277-278:

6.— Աստուածաշունչ, օրինակուած Կ. Պոլսոյ մէջ, 1676(?)ին, Թէքիրտաղցի Մարգիսի համար: Գրիչ՝ Նահապետ Ուրֆայեցի?: Ծաղկումը՝ մասամբ Մարկոս պատկերազանի ձեռքով.— Զեռ. Երևանի, Թիւ 349:

7.— Խորհրդատետր, օրինակուած Տիրատուր գրչի ձեռքով, Կ. Պոլսոյ մէջ, Պատկերազարդող՝ Մարկոս պատկերազան.— Զեռ. Ս. Յ. Թ. 2275:

8.— Խորհրդատետր, օրինակուած Տիրատուր գրչի ձեռքով, Կ. Պոլսոյ մէջ, Պաշատուր Երէցի համար: Ծաղկող՝ Մարկոս պատկերազան.— Զեռ. Ս. Յ. Թ. 2289

Այս երկու վերջիններուն թուականները չեն նշանակուած. յայտնի չէ թէ իբր մահէն քանի տարի առաջ նկարազարդած է զանոնք:

Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ

ՅՈՒԵԼԵԱՆՆԵՐ

ՆՈՐԻՑ ՄԻ ՊԱՅՅԱՌ ԶՐԱԻՈՐ ԳՐԻՉ

Բայց օտարութեան մէջ ձուլուող կորչող սերունդներէ ցաւը հանգիստ չի տալիս բանաստեղծին և հոգևոր հովիւին, որի ժողովուրդէ մի մասը աղէտ-նեկրով դուրս է նետուած հայրենի օջախներից, և օտար ակերում խամբում ու կորչում են հայրենի բոլոր սրբութիւնները:

1" Յոյն ու Պարսիկ և Ասորին
Մեր օրերում,
Նորէն կ'իշխեն մեր միտքերում,
Լեզուն գոր դուք տրւիր մեզի,
Լոյս բանալի,
Կը սընայ կայտ դարպասին դէմ
Մեր անցեալին,
Կամ տըրտըտած, խորշակահար,
Դուրս է մետուեր մեր շարկերէն,
Եւ ամսերումը որբուկի պէս
Կուլայ մարէն:

Բանաստեղծի կեանքը հոսում է հենց այդ ոգեմաշ միջավայրում. նա իր ողջ ուժերն ու կարողութիւններն է դնում ամբարտակելու կլանող անհեղձ.

Ժողովուրդն այս, բաժան, բաժան,
Փոքրած ինքզինք,
Պարպում է սպառ իր հայրերու
Շունչէն կայտարդ,
Խըրոյստանէն պողպատահունչ...

Այսպէս իր երգն էլ երբեմն մեղմախօս է, երբեմն պողպատահունչ, բայց իրականութիւնը թևաթափ է անում հայրենի ցաւերով միացող հոգին: Եւ նա օգնութեան է կանչում մեծ լուսաւորչին:

Դարձուր Յարէն դէմքդ աղուական
Այս գրքոսիմ վըրայ բըշուտա,
Հնդհուած հագար կըտորմերու
Մուք, անթափանց,
Արմատայիսի ու գաղթական.

Սըբրէ փռչին հայելիին
Հայ համեարին:

Իւրաքանչիւր տողը վշտերով ու լուսերով արեկոծուող հեղինակի ու գին և սիրոյ, երախտիքի անհուն զգացումը՝ մեր դարութեան հոգեւոր հօր ու հանճարի հանդէպ :

Կ Ա Ր Մ Ի Ր Զ Օ Ր Ա Վ Ա Ր

1975 թուին մեր դրականութիւնը հարստացաւ մի նոր, նշանակալից գործով : Երուսաղէմում լոյս տեսաւ Նղիվարդի «Կարմիր Զօրավար» ծաւալուն պոէմը, ձօնուած Հայ Ժողովրդի պատմութեան ամենանուիրական դրուագներից մէկին՝ հարիւրամեակներ շարունակ մեր Ժողովրդի ինքնութեան ու հաւատի խորհրդանիշ եղած Վարդան Մամիկոնեանին և նրա վարած Աւարայրի ճակատամարտին :

Հազար ձևերով ներդրուած, բազում երկերի ու երգերի նիւթ դառած, դարերի խորքից լուսարձակելով եկող այս կերպարը, Նղիվարդը ներկայացրել է այնպիսի գորովալից ցերմութեամբ, այնքան տաք երևէջներով, նիւթի իմացութեամբ ու սեփական խորքի այնպիսի հաւատով, որ հեռաւոր դարերի առասպելացած հերոսը դառնում է կենդանի, Հաղորդական ու մտերիմ :

Թւում է դորձը ջերմ ու յուզիչ է դարձել նաև այն պարզ պատճառով, որ իրեն՝ Հեղինակի և նրա սերունդի կեանքն էլ, անցած Նղեունի արհաւիրքներով, եղել է նոյն այդ ճակատամարտի շարունակութիւնը :

Սև երբ բանաստեղծը նկարագրում է այն ժամանակուայ ամայացած Հայրենիքը, երակներին մէջ կայծկլտում են, հաւանաբար, իր աւեր ու թափուր մնացած ծննդավայրի անմոռանալի պատկերները, իր ամայացած Վասպուրական աշխարհը .

Բայց աշխարհն Հայ,
Արժայազարկ է ամագառ . . .

Երկիր Հայոց,
Արիւնտ թուր, գլորուզ թագ,
Ծալլուած դրօշ ազատութեան,
Դեռ անվըմար կարմիր մուրիակ :

Սև աւա Կարմիր Զօրավարի գլխաւոր հարցերի հարցը՝ հաւատը փոխելու մերժում ուղարկելուց յետոյ, Հայ նախարարները կանչում են Պարսից արքունիք, ուր նրանց ընդունում են օտար հեզմանքով, մահուան ուրուագծերով : Նախարարները աւելի լաւ բան չէին սպասում, բայց շփոթուած են ու չլուարած : Վարդանը իր խօսքը պիտի ասի : Կանչուած են իրարու հանդէպ Յազկերտն ու Հայոց սպարապետը .

Պահ միաբար գարնուեցամ
Նետերն իրնց օայտած՝ ֆնարում
Սև իրարու փոխանցեցին
Զայրալքն ու հուրն իրնց սրտին :

— Ո՛վ կը գաէ իր ասարծոյն՝
Կրնայ դուեկ օայնքան դիւրին
Իր արքայինն :

Պատասխանում է Հայոց գորավարը: Ահեղ վտանգ է կախուած երկրի վրայ: Նախարարների մէջ տարածա յնութիւն է: Վասակի դերքը յայտնի է: Ունի իր համախոհները:

Եւ Մամիկոնեան գորավարը որոշում է անձնուրաց մահով յաւերժացնել ժողովրդի ինքնութեան կամքը: Բարոյապէս տապալել ոսոխին և ձախողել նրա նենգ ծրագիրը: Նախարարները հաւատափոխութեան կեղծ խոստում են տալիս, վերադառնում են երկիր՝ պատրաստելու հակամարտը:

Վերադարձել են, բայց պառակտուած են առանց այդ էլ անհամեմատելի զիչ ուժերը:

Վարդանը ձին հեծած շրջում է գիւղից գիւղ, ոտքի հանելու, կազմակերպելու ժողովրդին:

Կը շրջէր ամ
Մրիվարովն իր ամմամն,
Ու կը մայէր սարերում հռծ',
Շիրմաճարեր հիմ փառքերում:

. . .

Ձիւն վրայ իր սպիտակ
Նման էր ամ մակառագրիմ
Մեր աշխարհիմ:

Յուզախառլ է Անգղ բերդի տեսարանը, ընդվզող ժողովրդի նկարագիրը, որը պատրաստուած է անհաւասար կռուի, որը որոշում է մահով յաղթել անյաղթելի թշնամուն:

Շիրիմներէն ասրբեր հագար
Եկեր շարուեր էիմ կարծես
Նարէն կարգով, ողջերու քով,
Բազմ մ'իմնչպէս հողէն բխող . . .

Ու պատրաստուած են երկրի բոլոր ծայրերում, զաշտերում, տնեւում, դարբնոցներում: Հեղինակը բոլոր միջոցները օգտագործում է միտաւորա ստեղծելու: Մի քանի տողով գծում է յաճախ պատմական դէմքերին, յիշում է թեւաւոր ասոյթներ մեր պատմութիւնից, իշխանների մտահոգութիւնը, դատողութիւնները, Վասակի և Խորենացու զրոյցը և այլ պահեր:

«Կեանքը սակայն ետ չի մայիր»,
Ըսաւ Վասակ,
Աչքը սեւեռ! վաճակամիմ.
«Հիմ արժէքներ չեն յարմարիք
Օրերու մար»:

Ապա Վասակը յիշում է իր պատանդ գաւակներին, իր անցած կեանքը:

Իր հոգիէն կը քալէիմ
Մամբաղանդազ հագար դագազ:

Ու թուած է բոլոր յիշուած չարագործութիւնները: Կարծում ենք այստեղ բանաստեղծը շատ է տուրք տուել աւանդական պատումին, մինչդեռ այստեղ

օրոսն իր սուր մտքով կարող էր մի քիչ անաշառ լինել իր գաւազներին արքունիքում թողած մարդպանի Հանդէպ :

Ամէնից ապաւորողը սակայն խօսքի տրամադրութիւնն է, ներքին այն ուժը՝ որով բանաստեղծը ձուլել է իր անդերքը: Զօրեղ անդերքից, ցնցող պատկերներից է գլխաւոր ճակատամարտի նկարագիրը .

Դաշուը կարծես
Փոքրացեր էր իր լայնքին մէջ,
Լեռներն եկեր իրարու ճով :

Սուլոցն անեղ փիհներում,
Հրամաններ, աստներ ու սիչ ,
Դողդիւմներ վանաներու ,
Հառաչանքներն ինկողներում,
Խրխիմքը խօլ մտոյզներու ,
Միախառնուած ,
Կը շիւնէին մուտգ մը մութ,
Ամերկբային :

Կարմիր Զօրավարի մահն է նկարագրւում, երկրի վիճակը, մտորումներն ու այտօրուայ Հայրենիքի գովքը .

Դարեր յետոյ ,
Նրխվարովն իր հրեղէն
Կեցած մարէճ
Հողին վրայ իր արտօնումն :
...
Հոն եմ շէներն ,
Նոր քաղաքներ ու մութ փառեր...

Բանաստեղծն ինքը իր սեփական կեանքով կեցած ճակատագրի դժուար ոլորտի մէջ, բերած անձնական իր փորձն ու խմաստութիւնը, գործում է օտարութեան մէջ սփռուած իր ժողովրդի բարօրութեան համար և իր ստեղծարարութեան համար էլ վերցնում է նրան յուզող ամենակենտրոնական հարցերը: Եւ այս գործի մէջ յատկապէս դրել է իր ամբողջ սէրն ու կարողութիւնը և յաջողել է մեծապէս: Վարսմիր Զօրավարը Հեղինակի և մեր Սփիւռքահայ դրականութեան նշանակալից նուաճումներից մէկն է :

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՋՈՒՆ ԵՒ ԽՕՄՔԻ ԱՐՈՒԵՍԸ

Մի բանաստեղծի յաջողութեան առաջին վկայականը նրա լեզունն է: Լեզուական արուեստի իր յատուկ հիւսուածքը, լեզուական այն հնարանքներն ու դիտերը, այն յատուկ հրանիւթը, որով գրողը շաղախում է իր յուզումներն ու մտքի խոյանքները և տալիս է ընթերցողին:

Կատարեալ բանաստեղծը իր Հերթին մշակում է մայրենի լեզուն, հարտացնում է նրա բանաստեղծական խօսքը:

Բերում է իր յատուկ վարուելակերպը լեզուի հետ, բացում է նրա նոր

Հնարաւորութիւնները, բերում է իր գոյներն ու ձեւերը և եթէ զօրեղ անհասու-
կանութիւն է, նետում է իր կածաններն ու ծիածանները:

Բանաստեղծութիւնը մեծ սէր է, մեծ զգացում, զգացումի ուժով է
չափոււմ բանաստեղծի ուժը՝ անալիս հերթին:

Բանաստեղծութիւնը խորունկ խորհրդածութիւն է, միտք ու խոս-
տութիւն է արտայայտուած մեծ զգացումով ու պատկերով. արանցով էլ տար-
բերում է բանաստեղծութիւնը այլ ձեւերով ստուած իմաստութիւններից:

Պօքի բարձրագոյն արուեստն է բանաստեղծութիւնը: Եւ նա ունի իր
ներքին շատ նուրբ օրէնքները:

Նա մեծ մտամբ արտայայտում է խօսքի նկարած պատկերներով և
յուզալազ հաղորդումներով:

Իւրաքանչիւր կատարեալ բանաստեղծ ունի իր ստեղծագործութեան
յատուկ մանրանկարչութիւնը:

Միտածանակ խօսքի բարձր արամադրութիւնն է ստեղծում բանա-
տեղծութիւնը: Իւրաքանչիւր բանաստեղծ ունի իր խօսքի երաժշտութիւնը, իբր
ուրիշն ու չափը:

Ամենակարեւորը սակայն այն է, որ այստեղ որոշումներն ու թուարա-
նական հաշիւները ոչինչ անել չեն կարող:

Որոշողը՝ մարդկային խնոնուածքն է, մարդկային ոգին ու սաղան-
որ՝ նախահայրերի, բնութեան և Աստուտուածն է որոշողը:

Եւ իր հայրենանուէր գործերից և իր ստեղծագործութիւններից յայտ-
նի է, որ Եղիշարդը ամուր և անկեղծ խառնուածքի տէր է, այդպէս էլ իր ամ-
բողջ գրական վաստակը ունի ամուր բնուորութիւն, համակուած է բարձր աը-
րամադրութեամբ, նուրբ զգացումներով, շեշտուած անկեղծութեամբ ու ան-
բեկանելի հուստով:

Տաք ու գունազեղ է նրա բանաստեղծութեան նկարչութիւնը: Նրա զօ-
րեղ ու նրբաշաղ գրիչը հարուստ ու շտալ է իր տիրոջ նման, յստակ ու ամրա-
կամ, երբեմն կոշտ, յաճախ շատ հանդարտ ու մեղմախօս. բանաստեղծութիւ-
նը ինքը՝ հեղինակն է, իր բարի ու բուխ տողերի մէջ առատօրէն շող է տալիս
լեզուական իր յօրինուածքները, գիւտերն ու փայլատակումները զարմանալի
թեթևութեամբ ու բնական, առանց ճիգերի և արհեստական նոտաների: Հայոց
լեզուն մի զարմանալի ոսկեշաղախ է նրա ձեռքերի մէջ և լեզուաչէն բանաս-
տեղծը ձուլում է իր ուլած ձեւերն ու ոճերը:

Վերաբարկուած թեւատր լեզուն, որ սիրելի հակումն է այս տողերը դը-
րողին, նպատակ ունի միայն աւելի յստակ հին օրերու վերակոչում մը... քը-
րում է հեղինակը: Ուրեմն շատ լաւ գիտի իր արածի գինը, թէև սիրում է եր-
բեմն անխոյժ կատակով խօսել իր պոէզիայի մասին: Հաւանաբար սա ևս ներ-
քին ուժի մի հաճելի արտայայտութիւն է:

Եւ իսկպէս, լեզուն ճոխ է, յաճախ վեհ ու բարձր, բայց ոչ երբեք
փերամբարձ: Ընդհակառակը, պարզ է ու ջերմ, ընկալուող ու համակող: Իր
աղատ ու հարուստ լեզուաշաղախի մէջ, նա զարմանալի դիւրութեամբ է գա-
ւաւորում իր ձուլած բառերը, որոնք միշտ ներդաշնակուած են ամբողջութեան
հետ և մի առանձին հմայք են տալիս գործին, քանի որ արուած են բնածին ճա-
շակով և նրա ստեղծած բոլոր բառերն ու հնարանքները բխում են հենց մայրե-
նի լեզուի խորքում եղած հնարաւորութիւններից, իսկ սա ամենաթանկն է որ-
ևէ գրականութեան համար: Միտածանակ, հետաքրքիր է որ իր թարմու-
թեան հետ, նա երբեք չի տարուել և բնաւ տուրք չի տուել ժամանակակից ու-
րանների բարձր ձեւաձոյններին. մի նոր ապացոյց որ այդպէս անում են բովան-

դակազուրկ աղքատ հոգիները. Եղիվարդ բանաստեղծը ասելիք շատ ունի: Բանաստեղծը բնաւ դերի չի դառնում ասանդական ձևերին: Շարահիւտում է յաճախ շատ ազատ ու անկախ, բայց դեղեցիկ գումարումներով և բնական անցումներով, հակասութիւն չստեղծելով երբեք, դիտոնանա չսարքելով դասական ձևերի հետ:

Եղիվարդի գրեթէ բոլոր գործերում կայ մի լուսաւոր ներդաշնակութիւն, որովհետև համակուած են նրանք հոգու ջերմութեամբ և անկեղծութեամբ: Իսկ ազնիւ ու բարի անկեղծութիւնը ներդաշնակում է ու լուսաւորում կեանքում ամէն ինչ:

Ահա մի քանի օրինակ նրա իմաստալից ու դեղեցիկ խօսքերից.

Սալումէի դէմքը դալուկ,
Իր ցողունին վրայ կախուած
Բաժակ մըն էր դեղձան վարդի:

Պարող Սալումէի մասին գրում է.

Ան կը պարէր . . .
Շէմքը ամոր թուրք օճեքում,
Ալիքն ամոր ձիւն հասակին . . .
. . .

Ահա պարէի մի այլ աստիճանը.

Ան կը պարէր:
Ու գրծուար էր ամուս մը տայ
Այդ խելագար՝ շահչամի մըրամ դարձող՝
ձերմակ օճիւն . . .

Եւ մարդիկ չէին կարողանում հետևել միշտ փչրուող ու միշտ շինուող փրփրազեղ այդ ալիքին:

Եղիվարդի լեզուն հարուստ է և շնորհառատ, ցանկացած պատկերն ու բարդ վիճակը նա գծադրում է շատ դիւրին, թեթև ու տպաւորիչ: Այս գործում շատ կարևոր է բառերի դասաւորութիւնն ու միջավայրը, բառերը միայն ետ ու առաջ դնելով, բառերի հարևանութիւնը փոխելով կարելի է շահել շատ, կամ բոլորովին կորցնել խօսքի հմայքը:

Իսկ մեր բանաստեղծը բառերը երբեմն այնպէս է գործածում որ նրանք ասելի իմաստալից են դառնում: Գետի մասին խօսելիս՝ գրում է.

Ալիքներէն շատագլորայց,
Աւազներու ռգիւն շարժում:
Կամար մը քոյլ, գոյգ մը պատեր,
Խածած փէշը ժամանակին . . .
Անպատի սրտին՝ ամիդ . . .

Այսպէս է սկսում «Տիպրոնի Աւերակներուն Մէջ» դասաշունչ բանաստեղծութիւնը:

Կամ բազում դարերի կարծրացած դատանութիւնների խորքով անցնող՝ «Նեղոսի Ափին» ուժեղ բանաստեղծութիւնը.

Նւ արքաներ, քուրմեր տըժգոյն,
Ապառաժեայ քունին խորէն
Կազմած քափօր,
Յիսուն դարու ծամըր քայլով...

...
Խորտակելով կըրամիքը ժամամակին,
Դամբաններում յաւերժակամ,
Անոմ քուր Կ'անցնին տես,
Կազմած քափօր,
Որոմ քրքրմն՝
Բուրգերում ծոցն արոմեցին
Այս աշխարհի մութ ապագամ:
Ինմ կը քըւի քէ կը բացուին
Շըրքները քար մեծ լըռութեամ . . .

Միայն այս մի քանի օրինակից կրկնում է թէ որքա՛ն բազմազան ու բազմախորհուրդ են բանաստեղծի արտայայտչական միջոցները: «Անապատի սրտին՝ անիղձ» մի բառով արևում է անապատի ամբողջ խորքն ու էութիւնը. և ինչպէս տեսնում ենք, նրա պատկերները պարզ նկարներ չեն միայն, այլ դարերի ընդհանրացումներ են, խորքերի բացայայտում, մեծ նկարագիրներ, պատմութիւն ու փիլիսոփայութիւն: Որքա՛ն խորունկ խմսատ ունի տամար բառից ստեղծած տամարել արտայայտութիւնը: «Սահմանելով իր խաչանիչ, ասողահարգ կրկինք, լուսածաղիկ մոմ... Գիր մը ինչպէս Հին խորհուրդի մազադաթին վրայ ջուրին . . .»:

Երբեմն մի քանի սուր բառով գծում է նկարագիրը.

Յազկերտ քազմած գառին վրայ,
Բարձրահասակ ու խոյաքիթ . . .

...
Ըստ Մանն Ապահունին
Չարխսմոր ու անքափանց...

Յաճախ մէկ տողով ներկայացւում են հոգեկան շատ խորունկ ու նուրբ պահեր.

Լուս են բոլորն,
Իրեցն մարբան կարմեցուցած մարդոց մտան:

Նւ դրական ծաւալուն գործին յոյզ ու հմայք տուողը, խորութիւն, վեհութիւն, ստեղծագործական ուժ տուողը Հենց այսպիսի տողերն են, որոնք իբր կողքի շարած գուցէ այնքան տպաւորիչ չեն, որքան տեքստի մէջ, իւրաքանչիւրն իր մթնոլորտում:

Մենք օրինակներ սովորականից շատ բերինք, պիտենալով, որ մեր ընթերցողի խոչորագոյն մասը անձանթ է բանաստեղծի գործերին:

Մի տեղ խորհմաստ բառ է ստեղծուում, մի տեղ թևաւոր խօսք, մի տեղ հոգեբանական նրբադոյն պահ է նշուում, մի տեղ խոչոր ընդհանրացում է արւում ու վառ պատկերներն են ճառագայթում, բացելով մարդու հոգին, մըտքի թռիչքը, ծփացող սէրն ու կարօտը ու ողջ էութիւնը կնքելով յաւէտ թղթերի վրայ. և այս ամէնը կոչուում է բանաստեղծութիւն, եթէ նա համակուած է ներքին ուժով, մեծ սիրով, անխառն նուիրումով :

Լինում է, որ ամէն ինչ կայ, բայց մեծ սէրն ու նուիրումը չկայ, ուրևն անկեղծութիւնը չկայ, ուրեմն ոչինչ չկայ բանաստեղծութեան համար, բանի վերոյիշեալ բոլորը մեծ սիրոյ և մեծ նուիրումի համար են միայն :

Բանաստեղծ Եղիշաբաբի մօտ ամէնից շեշտուածը հենց տրամադրութիւնն է, պայծառ անկեղծութիւնը, իր խօսքով ասած՝ «Հորիզոնէ մինչ հորիզոն... Հազար ամէ մինչ հազար ամ...» :

Շարքերի մէջ ամենէն ուժեղներէց է՝ «Անոնք որ չեն մեռնիր» : Ամուր, ուժեղ գործեր են. առանձնապէս տպաւորել է «ԵՍ Սողոմոնն եմ այս գիշեր» : Նուրբ ու խորունկ ճշմարտութիւններով, իմաստուն խորհրդածութիւններով լեցուն է հենց առաջին գործը՝ «ԵՍ Եհովան եմ այս գիշեր» :

Կուշտ եմ բոլոր բարիքներէն
 Ինձմէ ինձի-
 Ամառու-թիւնն ամզամ հիմցած
 Պատմութեամ մ'է իմ ունեւում :

Զգացում է Արեւիչը իր ետուն կեանքով, իր դրականութեամբ, իրեն՝ բանաստեղծի բազմահոգս կեանքը, հին աշխարհի պատմութիւններն ու արուեստը և ամէնից զլխաւորը՝ աղետաւոր մանկութիւնն ու իր վտարանդի ժողովրդի դժուար ու բարդ ճակատագիրը : Այս ամէնը իրենց զօրեզ կնիքն են դրել նրա ստեղծագործութեան վրայ՝

Զի Հայ ըլլալ պատգամ է և ֆակտագիր,
 Գարեբու դէմ պարգած քրօշ :
 Խաւարն ի վեր կը բարձրանար
 Կաթաղիկէն էջմիածնի,
 Գիշերին մէջ հագած գիշեր...

Այս ամէնը իրենց խորը տրամադրութիւնն են բերել, բայց բարեբախտաբար բանաստեղծի կեանքը հարուստ է եղել նաև պայծառ էջերով, բարի, դործարար ընթացքով և մեծ բարեկամութիւններով և ստեղծուել է մի հարուստ ու պայծառ դրականութիւն, դիզուել են հատորներ, դիզելով՝ հոգևոր, մտաւոր, պատմական, դրական, լեզուական, ռճական դաճեք, որոնք կէս դար շարունակ ներկայացրել են մի հարուստ, յուզումնալից, բեղմնաւոր կեանք :

Ներկայացնել այս ամէնը կէս ժամում, տօնական դահլիճում՝ հնարաւոր չէ ու հարկ էլ չկայ :

Հետաքրքիր է որ մեծայարգ հեղինակը միշտ կատակով է խօսում իր դործերի մասին և արժանի հոգը չի տանում նրանց ճակատագրի համար :

Այդպէս է բանաստեղծութիւնը և այդպէս է ինքը, ստեղծողը : Բա-

նաստեղծութիւնը նուիրումն է ամենասակաշատ և անմնացորդ, իսկ այդպէս նուիրողը երբեք չի հաշուում՝ թէ ի՞նչ տուեց և ի՞նչ առաւ :

Այս գեղեցիկ, սիրալորդ վաստակը սպասում է իր խորը ուսումնասիրողին և շատերը մեծ սիրով կը ստանձնեն այդ սրատուաւոր գործը :

Իսկ մենք այսօր ցանկանանք մեր վաստակաշատ յորեւեարին, գրողին ու գործչին, մեր գրչակից եղբօրը՝ ստեղծագործական նորանոր յաղթանակներ :

Ձեր գրիչը պատկանում է բոլորիս, Ձեր դիզած գրական հարստութիւնը ամէն մէկիս հարստութիւնն է :

Դուք իրաւունք չունէք օր կորցնելու : Տուէք անդաւաճան թղթին Ձեր վարպետացած գրչի, Ձեր պայծառ արուեստի հարստութիւնները :

Կը հոսեն կը գնան ժամանակները և կը մնայ միայն գործը և մարդու իրեն առասպելը : Քանի որ իւրաքանչիւր ստեղծագործող, իւրաքանչիւր վառ անհատականութիւն իրենից յետոյ պիտի թողնի իր առասպելը :

ՄԱՐՕ ՄԱՐԳԱՐԵԱՆ

(Շար. 3 և վերջ)



ԳԻՏԱԿԱՆ

ՀՈՅԱՄՈՂԵՋՆԵՐՈՒ ԿԵԱՆՔՆ ՈՒ ՄԱՅՐ

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԿԱԼԱՆՈՒՄԸ

Վիրաւոր գերանամողէզը և չորս ձազ հոյամողէզները որոնք ականատես եղած էին այս խողխողումին՝ վերադարձան ծովալիճը: Յաջորդ օրերուն անոր մէջ ծայր առաւ նոր ու վերջին բունամղում մը, զոր երեք պիտի չգիտնայ: Այլամողէզին պատուած տեղէն սուր ցաւեր կը մղկտային. ալ հաճոյք չառաւ երամակի միւս անդամներուն ընկերութենէն: Անբացատրելի ուժէ մը քըչուած վերադարձաւ կրաբարձուների մօրուտը՝ տաղնապեցնող պատճառով մը, զոր երեք զգացած չէր ասկէ առաջ:

Ինը օր ուշացուց իր մօրուտ երթալը, գոհացաւ կէս քուն մնալով ծովալիճին մէջ, ծուլօրէն քաշքշելով ինքզինք, կիսասոյզ, մէկ տաք տեղէն միւսը. և սակայն ցաւը չնուազեցաւ: Տասներորդ օրը, վերջապէս, մտաւ գետը՝ վերջին անգամ ըլլալով. երեքն կանգ առաւ ծառի մը վրայէն ճարակելու համար:

Ի՞նչ զեղեցիկ էր ան այդ ցաւազին ճամբորդութեան ընթացքին և ի՞նչ վայելչօրէն ներդաշնակուած՝ իր շարժումները, երբ ան կը լողար դէպի կրաբարձուները: Ան վերջին մեծ արդիւնքն էր միլիոնաւոր տարիներու կատարելագործման: Հանդարտօրէն, ճօճուելով մէկ կողմէն միւսը, վեհաշուք քնքուութեամբ խարակին մօտէն անցնելով՝ գնաց մօրուտը:

Հոն վարանեցաւ. իր հսկայ վիզը՝ վերջին անգամ ըլլալով պտըտացուց բուրբուր, կարծես վերաշափելու իր թագաւորութիւնը: Գետնէն երեսուն ոտնայաճի իր պղտիկ գլուխը վեր, վե՛ր բարձրացուց վերջին խոյանքի մը համար: Յետոյ, կամաց-կամաց խոնարհեցուց զայն, վայելչագոյ կամարը հանդարտօրէն չըջեցաւ, պոչը քըռեցաւ տիղմին մէջ և վիթխարի ծունկերը սկսան կրկնել: Վերջին դարարտանջ մղումով մը յառաջացաւ խորունկ յորձանուտին մէջ:

Մութ շուրերը ծածկեցին իր սրունքները որոնք ալ երեք պիտի չկարենային դուրս ելլել՝ եղէզներու պէս. վերջնական կալանումն էր: Յօշոտուած կողմը տակը դնաց. պոչը թաղուեցաւ առ յաւէտ. անհետացաւ նոյնիսկ իր վըզին սիրուն կամարը: Գիթին զնդածև ցցուածք քանի մը վայրկեան վեր մնաց, կարծես թէ կը տենչար, վերջին անգամ, լիթոք ներշնչել արևադարձային ծանր օդը: Յետոյ ան ալ անհետացաւ: Հանգչելու դացած էր. անոր հուժկու մարմինը պիտի մնար ներգիտուած տիղմին մէջ, որ զայն պիտի ողջագուրէր սեղծօրէն 136 միլիոն տարիներ:

Միակ ականատեսը գերանամողէզին մահուան, ի՞նչ հեղնանք, փոքրիկ համաճոյն էր, որ կիւկաթ ծառի մը վրայ նստած ապահով՝ կը դիտէր. գետեզրին վրայ երկնող բուրբ արարածներուն մէջ՝ ինքը միակն էր որ սողուն չէր: Գերանամողէզները ճակատագրուած էին անհետանալու երկրէն, մինչ այս

փոքր կենդանին պիտի վերապրէր. իր շառաւիղները և ազգակիցները պիտի լիցնէին ամբողջ աշխարհը, ամենէն առաջ նախապատմական ստեռաւորներով, անո՛նք ալ սահմանուած անհետանալու — տիտանարէշը⁸, ստեռանին⁹, արշամին¹⁰—, և յաջորդաբար կենդանիներով զորս մարդը պիտի ճանչնայ, ինչպէս մամուլը, սուրճը, փիղը, վայրի եղը և ձին :

ԺԱՅՈՒԵՐՈՒՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Բնականաբար, որոշ փոքր սողուններ, կոկորդիլոսին, կրիային և օձին պէս պիտի վերապրէին. սակայն ինչո՞ւ անո՛նք և փոքր ստեռաւորները ապրեցան

⁸ Titanotheres.— titan — տիտան (հսկայ), there — գազամ, երէշ = տիտանագազամ կամ տիտանաեղջեր: Մօտ 14 ոտք երկարութիւն ունէր. այսօրուան ռնգեղջիւրը թէև մնամաւթիւն ունի տիտանագազամին, սակայն անկէ չի սերի:

Նուիմդագազամը (Միացեալ Նահանգներու Wyoming նահանգի (Պոլույստոյն) հիւսիս) Uinta քաղաքին մէջ առաջին անգամ գտնուած ըլլալուն այս գազամին քրածոն, այդ քաղաքին անուանով ալ Նուիմդագազամ կոչուած է) և տիտանագազամը ապրած են հայամողեղներու անհետացումէն վերջ՝ նոր կեանքի արշապալսին, որ կը սկսի 70 միլիոն տարիներ առաջ : Երկուքն ալ շատ տգեղ ստնաւորներ եղած են :

⁹ Mastodon.— masto — ստեռ—, don — ակոյ, ժանի, որմէ՛ ստեռ ժանեաւողեղ, կարն՝ ստեռածանի : Փիղին կը նմանէր, երկայն պտտիմով, ծանրակշիռ ժանիքով, ու թօշ տկանցներով : Տիտանագազամին գրեթէ ժամանակակից. այն շրջանից երբ մերկայիս ապրող կենդանական աշխարհին տեսակները պէտ փոքրատնամաւթիւն կը կազմէին. այն շրջանն էր երբ այսօրուան մեծ լեռները կազմուելու վրայ էին և երկրին ջերմութիւնը հետզհետէ կը նուազէր : Նոստոս հարուստ է ստեռածանիի բազմաթիւ ոսկորներով. կ'ընդի թէ լեռներու մեծ յեղաշրջումը չկատարուած՝ երկար, շատ երկար դարեր ճամբորդութեան վերջ այս հրաւայլաման ստեռաւորը անցնելէ ետք՝ հարաւային Ասիայէն դէպի հիւսիս, Պէրիինկի մեղուցին այն ատենուան ցամաք կամարեղէն մտած է նոր Աշխարհ, ուր սակաւաթիւ են անոք ոսկորները :

¹⁰ Eohippus.— eo — արշա, hippus — ձի = արշածի, նախածի, որ ազուէսի մեծութիւն ունէր. այսօրուան ձից միլիոնավոր դարերու ընթացքին գտնուած փոփոխութիւններով ուղղակի կը տեսնուի արշածիին. շատ լաւ ծանօթ է անոր ինչպէ՛ս ձի դառնալը, որովհետև իրերայաբոյր բազմաթիւ կմախփներ և բրածոներ գտնուած են սկսեալ նոր կեանքի արշապալսէմ՝ իր շունի չափ մեծութեան մինչև անոր կառածի և մրցամտի դառնալը : Հետաքրքրութեան համար՝ փոփոխութեան գլխաւոր շրջաններն են. արշածի՝ 58 միլիոն տարի առաջ, երեսածի՝ 38 միլիոն, միջնածի՝ 25 միլիոն, նորածի՝ 13 միլիոն, արդի ձի կամ ձի՝ 1 միլիոն : Նորածին որպէսզի այսօրուան ճշդը դառնայ, տասներկու միլիոն տարի պէտք եղած է : Օրինակ, միայն ոտքի փոփոխութիւնը ցոյց տալու համար ըսենք. արշածին կ'ապրէր անտառի մէջ, բազմաթիւ անամաւորներ ունէր. մթնոլորտի ցրտացումով ալ անտառներու հետզհետէ նուազումով արշածին հարկադրուեցաւ չոր գետնի համար պատշաճեցնել ոտքերը, որոնց մատները իրարու միանալով կամ ճովտիները կորսուելով՝ միակտուր կարծր ելունգի վերածուեցան, զորս սմբակ կը կոչենք :

և մեծ սողունները չբացան: Այս հարցը կը մնայ աշխարհի դերագոյն տռեղծու-
 ւածներէն մին: Մօտ 65 միլիոն տարիներ առաջ, այն ատեն երբ Նոր Ժայռերը
 կը կաղմուէին, Հոյամողէզները անհետացան: Անոնց ոչնչացումը ամբողջական
 էր. և գիտնականները տակաւին համաձայնած չեն զոսացուցիչ բացատրու-
 թեան մը շուրջ. եռակուտչ¹¹ Հոյամողէզը իր փոթոթաւոր վիզովը, բռնակալ-
 մողէզ Արքան¹² իր վախազու ականներովը, պնեղամողէզը¹³ կիսաշրմանակ
 դրահովը, մեղմ բազակերպ մողէզը¹⁴, բաղկուտց հրէշը, բոլորը անհետացան:
 Հանճարեղ տեսութիւններ մէջտեղ գրուած են, որոնցմէ ոմանք գրա-
 ւիչ են իրենց յղացողականութեամբ: Լաւագոյնը զոր կարելի է յիշատակել այն
 է թէ փոխանցումներու բարդ յարաբերակցականութիւն մը պատահած ըլլալու
 է՝ կենսիքի վանազան երևոյթներուն մէջ տեղի ունեցող, որոնց ընթացքին մեծ
 սողունները ձախողեցան իրենք զիրենք պատշաճեցնելու մէջ: Մեր դիտցածը ու-
 բոշապէս այն է որ երկրի կարգ մը մասերու ժայռերուն խորը պահեստ մը կայ,
 որ 70 միլիոն տարի կը թուագրէ և որուն մէջ կը գտնուին Հոյամողէզներու ու-
 կորներու ճոխ հաւաքածոներ: Անկէ վերը բազմաթիւ ոտնալապի հաստութեամբ
 խաւ մը կայ, որուն մէջ կը գտնուին ամէն տեսակի փոքրաթիւ ոսկորներ: Նւ-
 անկէ վեր կու գայ զիրտի կուտակում մը, որ յաճախ խնդուած է փիղի, ուղ-
 տի, վայրի եղի և ձիու ստնաւոր նախորդներու ոսկորներով: Անկենդան խաւը
 համեմատաբար ամուլ ժայռին՝ Հոյամողէզներու մահը ներկայացնող մասը՝
 գետ լուսաբանուած չէ:

Անոնց անհետացումէն երկար ատեն վերջ և մարդուն հասնելէն ետք
 այն աստիճանին՝ երբ ան հետազօտելու կարող էր բրածոյ դարձած Հոյամողէզ-
 ներու կմախքները, նորանական պիտի ըլլար ծաղրելի մեծ սողունները որոնք
 անհետացած էին իրենց յատուկ յիմարութեան մը պատճառով: Գանդաղալարժ
 դազանները կ'ալպանուին ծաղրի նշաւակ դարձած իբրև ձախողածներ, իբրև
 ստեղծումներ որոնք զոյատեւած չէին, իբր ակայցոյց տալով թէ՛ պզտիկ ուղեղ
 մը մեծ մարմնի մը մէջ վերապրումը անկարելի կ'ընէ:

11 *Triceratops* — tri — երեք, *cerat* — եղջերաւ — (սմանցարստ), *ops* —
 դէմ, դէմք = եռակուտչ դէմքով մողէզ - կարճ՝ եռակուտչ կամ եռեղջիր: Մը-
 կու մտազու և սրածայր կտուղները կը գտնուէին դուրս ցցուած աչքերուն
 ազգակի վերերը - երկուսը՝ երկար դուրսի վրան և ազգուքեամբ, բայց աւելի
 կարճ միւսներէն: Այս կտուղները իր երեք անխորտակելի գեմքերն էին, որոնց-
 մով կրնար կեանքը վտանգել մոյմիսկ ամենէն արասափազու ու գորտար հո-
 յամողէզներու բռնապիտ-մողէզ Արքային: Անոնց շատ հետաքրքրական կենաց.
 մասու մէկ կտիւր մամբամամ պիտի նկարագրուի յաջորդիւ:

12 *Tyrannosaurus* — *tyran* — բռնակալ, բռնապետ, *saurus* — մողէզ
 (*saurus* իրականաբար մէջ պէտք է քարգամանի սուրուն (Օ—ով), որ ազգա-
 կի յումարէնի տառադարձութիւնն է տառերու հնչափախառնութեամբ. *s = u*, *au =*
o, *l = q* (լծարդ), բառը կ'ըլլայ *տող*. *ու* մասնիկը ամիցնելով կ'ունենանք *տո-
 ղու*. *saurus*ի սըր յումարէնի մէջ մասնիկ ըլլալու է *ու*նին հաւատար):

Կենդանիներուն, գազաններուն, սազուններուն և ձուկներուն բոլոր տե-
 սակներուն՝ բոլոր ժամանակներուն մէջ ամենէն կատարիմ, բացարձակ ուժու
 վը և արասափելի գոր երկիրը տեսած ըլլայ միմյև այսօր: Մէկ քաթի հար-
 աւածով փիղ մը կրնար գգտմնել: Մտաի մը կնդրիմ ակռաները անցրնելով կըք-
 մար կիսել գայն կզակիմ տեսիլի ուժովը:

13, 14 Այս միտպետ, բռնակալ-մողէզ Արքային, *Ankylosaurus*իմ և
*Trochodon*իմ մասին լայն ծածօր-քիւններ պիտի տպուին յաջորդիւ:

Իրողութիւնները ճիշդ հակառակը կը փաստեն: Վիթխարի սողունները տիրապետեցին երկրի վրայ 135 միլիոն տարիներ. մարդը վերապրած է միայն երկու միլիոն տարի և այդ ժամանակին մեծ մասը անցուցած է անարժան և խոնարհ պայմաններով: Հոյամողէզները կը մնան ամենէն յաջողակ կենդանի դիւտերէն մէկը, զոր բնութիւնը ստեղծած ըլլայ: Անոնք յարմարեցան իրենց աշխարհին հրաշալի կէրպերով և զարգացուցին մարմնի հաւասարակշռութեան, շարժման և ուժի բոլոր մեքենականութիւնը՝ պահանջուած իրենց կեանքի ձեռն համար: Անոնքի պատուի են որպէս աշխարհի ամենէն երկար տեւող տեսակներէն մէկը, որոնք տիրապետեցին իրենց անսահման ժամանակամիջոցին, ճիշդ ինչպէս մարդը կը տիրապետէ յարաբերաբար իր կարճ ժամանակամիջոցին:

ձԵՅՄՁ ՄԻՉԸԸՐ

Թրգով - ՀՐՈՒՆԴ ՆԱԳԱՇԵՆԸ

(Շար. 3 և վերջ)



ՏԻՐՈՒՆԻ

ԿԱՐԳ ՎԵՐՋԻՆ ՕԾՄԱՆ ԵՒ ԹԱՂՄԱՆ ԳԵՐՇ. Տ. ՍՈՒՐԵՆ ԱՐՔԵՊՍ. ՔԵՄՅԱՃԵԱՆԻ

Սրբոց Յակոբեանց Միաբանութեան երիցադոյն և բազմաշխատ անդամ Գերշ. Տ. Սուրեն Արքեպս. Քէմհանեան երկարամեայ հիւանդութենէ ետք իր յաւիտենական հանգիստը մտաւ Վարդավառի տօնին օրը, Կիրակի, 1 Օգոստոս 1976, երեկոյեան ժամը 5ին, Փրանսական Սէն Ժոզէֆ հիւանդանոցին մէջ: Հանգուցեալը 92 տարեկան էր:

Միաբանութեան անդամները հիւանդանոց փութալով, հանդուցեալ Սրբազանին դազազը Վանք բերին և երեկոյեան ժամը 6-30ին, Մայրավանքի զանգի ընդհատ զօղանջներուն ընդմէջէն փոխադրեցին Ս. Յակոբեանց Տաճար, Սաղմունքներու և Աւետարանի ընթերցումով:

Յետոյ օր, 2 Օգոստոս 1976, Մեռելոց Վարդավառի, չորս վարդապետներ հոգելոյս Սրբազանի դազազին շուրջ, փոխն ի փոխ սաղմոսեցին և կարգացին հանգստեան Աւետարանները: Ապա Աւագ Սեղանին վրայ Ս. Պատարաղ մատուցուեցաւ, ժամարարութեամբ Աւագ Թարգման Հոգշ. Տ. Գէորդ Վրդ. Նազարեանի:

«Ողջոյն»ի պահուն դազազը բեմ հանուցեալ և Գերշ. Տ. Ծահէ Արքեպս. Աճէմեան կատարեց վերջին օծման կարգը, սրբալոյս միւռոնով օծելով ճակատն ու ալը հանդուցեալին: Օծման կարգի աւարտին, Միաբանութեան բոլոր անդամները Աւագ Պորան բարձրանալով հոգելոյս Սրբազանին ճակատը համբուրեցին: Ապա Գերշ. Տ. Ծահէ Արքեպիսկոպոս խօսեցաւ դամբանական մը, որով դրուատեց հանդուցեալին մօտ կէս դարու անսակարկ ծառայութիւնը Հայաստանեայց Եկեղեցիին և Երուսաղէմի Ս. Աթոռին, և ըսաւ թէ Սուրեն Արքեպիսկոպոսի վախճանումով կ'անհետանար վերջին ներկայացուցիչը այն սերունդին՝ որ իւրայատուկ հաւատարմութեամբ և անսակարկ հաւատքով ապրելու ծառայել էր ի բարօրութիւն և պայծառութիւն Ս. Աթոռին:

Դամբանականէն ետք դազազը կրկին զեանդուցեալ եկեղեցիի տօնանը, և հաւատացեալներ մօտենալով երկիւղածութեամբ համբուրեցին հանդուցեալ Սրբազանին օծեալ ալը:

Հոգեհանգստեան պաշտօնէն ետք, Հ. Ե. Միութեան և Հ. Մ. Ը. Միութեան արիններու առաջնորդութեամբ ու բազմաթիւ ծաղկեպսակներով, պատկառելի և երկարաձիգ թափօրը ուղղուեցաւ դէպի Ս. Փրկչի ազգային գերեզմանատուն: Երկու անգամ, նախ Մայրավանքի մուտքին և ապա Սիոնի Դրան կամարին ներքե, հանգստեան Աւետարաններ կարդացուցանցան:

Ժամը 11ին թաղմանական թափօրը հասաւ Ս. Փրկչի վանք, ուր, ազգային գերեզմանատան մուտքէն ոչ շատ հեռու փորուած էր գերեզմանը: Հոն, հանգստեան շարականներու երգեցողութեամբ և Աւետարաններու ընթերցմամբ կատարուեցաւ թաղման կարգը, և զրեթէ կէսօր էր երբ Միաբանութիւնն ու ժողովուրդ վերադարձան Մայրավանք տխուր և վշտահար:

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն Գ Ի Ծ Ե Ր

Հոգեւորյա Գեղը. Տ. Սուրէն Արքեպս. Քէմհանեան ծնած էր Պոլիս, 1884ին և նախնական ուսումը ստացած ծննդավայրին մէջ:

1907ին եկած էր Երուսաղէմ և յաջորդ տարի Յարութիւն Պատրիարքի կողմէ աւագ սարկաւագ ձեռնադրուած ու մինչև 1918 ծառայած Ս. Յակոբի և որբատեղիներու մէջ: 1918ին կուսակրօն քահանայ ձեռնադրուած էր ձեռամբ Մկրտիչ Արքեպս. Աղաւնունիի: Երջնկ. Դուրեան Եղիշէ Պատրիարք 1922ին վարդապետական աստիճան և ծաղկեայ փիլոն կրեւրու արտօնութիւն շնորհած էր:

1922-1926 կը նշանակուի Պէյրութի Ս. Նշան եկեղեցիի Հոգևոր տեսուչ, իսկ 1928-1929ին կը վարէ Պատրիարքական Փոխանորդի պաշտօնը Դամասկոսի մէջ: 1928ին իր բաժինը կը բերէ Մամլթէյնի Ազգային Բուժարանի Հիմնադրումին:

Վերադառնալով Երուսաղէմ, 1929-1931 կ'ըլլայ Միաբանական Ընդհ. Ժողովի Ատենապետ. 1930-1934 կը վարէ Ս. Յարութեան Տաճարի տեսութիւնը, 1934-1941՝ Բեթղեհէմի Ս. Ծննդեան վանքի տեսութիւնը, և 1941-1951՝ Ս. Հրեշտակապետաց վանքի տեսութիւնը: 1944ին Տնօրէն Ժողովի անդամ կ'ընտրուի:

Երջնկ. Տ. Տ. Գէորգ Զ. Կաթողիկոսի կողմէ կը ստանայ եպիսկոպոսական ձեռնադրութիւնը 1951ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ: Իսկ 1959ին Տ. Տ. Վազգէն Ա Վեհափառ Կաթողիկոսը իրեն կը շնորհէ Արքութեան պատիւ:

1956ին կ'ընտրուի Ս. Աթոռիս գործերու ընդհանուր վարիչ:

1960ին կը քաշուի գործնական ծառայութենէ:

Հանգուցեալ Սրբազանը յառաջացած ասրիքին բերումով, վերջին մօտ տաս տարիներուն իր յարկաբաժինէն դուրս գրեթէ չէր ելլեր:



Հ Ա Ն Գ Ի Ս Տ

ԱՂԱՆԻ ՄԱՅՐԱՊԵՏ ՃԵՎԱՀԻՐՃԵԱՆԻ

Շարաթ, 28 Օգոստոսի երեկոյեան, Ս. Հրեշտակապետաց վանքի իր խուցին մէջ իր աչքերը յաւիտենօրէն փակեց Ս. Աթոռոյս երիցագոհն Մայրապետ Քոյր Աղանի ձէվահիրճեան: Հանգուցեալը յառաջացեալ տարիքի բերումով ատենէ մը ի վեր կը գտնուէր արդէն հիւանդագին վիճակի մէջ: Մահը արդիւնքն էր սրտի յանկարծաւաս տագնապի:

Աղանի Մայրապետ ծնած էր Սեբաստիա, 1898ին: Տարագրութեան զոհ տուած էր իր ամուսինը, իսկ իր միակ զաւակը՝ ինքնաշարժի արկածի մը, Հալէպի մէջ:

Մնալով առանձին, եկած էր Երուսաղէմ 1933ին: 1948ին դիմած էր Լրնդունուած Ս. Աթոռոյս Մայրապետներու շարքին, ուր աւելի քան քառորդ դարու ընթացքին ըրած էր իր լաւագոյնը, իր ուժերուն ներած չափովը, օգտակար ըլլալու համար այս Հաստատութեան: Կը մեռնի՝ հեզահամբոյր ու պարտաճանաչ Մայրապետի մը բարի յիշատակը ձգելով իր ետին:

Հանգուցեալին յուղարկաւորութիւնը կատարուեցաւ յաջորդ օր, Կիլիակի, 29 Օգոստոս, Ս. Կոյսի Վերափոխման տօնին, ճիշդ կէսօրուան ժամուն: Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ, Ձարչարանաց խորանին առջև կատարուած այդ արարողութենէն ետք, վանքի Տեսուչ Հոգչ. Տ. Մևան Վրդ. Ղարիպեանի գլխաւորութեամբ և բովանդակ Միաբան Հայրերու մասնակցութեամբ, յուղարկաւորութեան թափօրը ուղղուեցաւ Ս. Փրկչի Ազգային Գերեզմանատունը, ուր ամփոփուեցաւ առաւապակոծ մարմինը հանգուցեալին:

Տէրը յաւիտենական հանգիստ պարգևէ իր բարի հոգիին:





Ս ՅԱԿՈՒԲԻ Ն Ե Ր Ս Է Ն

* Կիր. 1 Օգոստ.— ՎԱՐԴԱՎԱՍԻ (Այլակերպութիւն Տեառն մերոյ): Օրում հանդիսատր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուց Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեան և քարոզեց՝ «Որ յարունցար ի Թարոր լե-րինն» քնարանով, յայտնելով թէ Թարոր լեռան վրայ տեղի ունեցած դէպքը առաւելաբար յարունութիւնն է Բրիստոսի աստուածային նկարագրին: Անդրադարձաւ նաև այն իրողութեան թէ Ս. Յակոբոս Տեառնէրայր, առաջին Եպիսկոպոսապետը Ս. Քաղաքին, այս տօնին է որ քարձրացած է պատրիարքական Աթոռ:

— Կեսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտօնած «Անդատան»ին նախագահեց Հոգշ. Տ. Կիրեճ Մ. Վրդ. Գարիկեան:

* Բշ. 2 Օգոստ.— Յիշատակ մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան: Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս կատարեց վերջին օծումը հանգ. Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Քէմհաճեանի:

* Որ. 8 Օգոստ.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարաւետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ապանեան:

* Շք. 7 Օգոստ.— Ս. Թաղէտի առաք. մերոյ և Սանդիստոյ կուսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Արդ. Յովակիմեան:

* Կիր. 8 Օգոստ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մերձատան մեր մատուոն մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վիգէն Վրդ. Այբազեան:

* Շք. 14 Օգոստ.— Ս. Որդոց և Թոռանց Ս. Գր. Լուսարորչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Նուրհան Վրդ. Մանուկեան:

* Կիր. 15 Օգոստ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկազուն Արդ. Մնչգոնեան: Ս. Պատար-

րագէն եւք կատարուեցաւ Խաղողորհնէքի աւանդական արարողութիւնը, նախազահութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեանի:

* Ծր. 21 Օգոստ.— Եփեսոսի Ս. Ժողովոյն (431): ԺԶ տարեդարձ գահակալութեան Ամեն. Տ. Եղիշէ Ս. Պատրիարքին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Մաշտոց Վրդ. Բարխուսեան:

* Կիր. 22 Օգոստ.— Բարեկենդան Ս. Աստուածածնի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատուոյն մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան:

* Որ. 27 Օգոստ.— Յունաց Ս. Կոյսի ննջման տօնին առթիւ, ըստ սովորութեան, առաւօտեան ժամը 1.30ին, Միաբանութիւն և ժողովուրդ իջան Գեթսեմանիի ձորը, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ պատարագեց Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տառուշարեան:

* Որ. 27 Օգոստ.— Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատուոյն մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան:

* Ծր. 28 Օգոստ.— Տօն Ծողակաթի Ս. Էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

— Կէսօրէ ետք ժամը 3.30ին, Ամեն. Պատրիարք Ս. Հօր գլխաւորութեամբ, Լիաբանութիւնը ինքնաշարժներով մեկնեցաւ Գեթսեմանիի ձորը ու քիչ ետք «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան երեկոյնան ժամերգութիւնն ու նախատօնակը՝ նախազահութեամբ Նորին Ամենապատուութեան:

— Իրիկուան ժամը 7ին, նոյն Տաճարին մէջ պաշտուեցան «Եկեցէ՛՛ի և Հսկման կարգեր, ապա գիշերային ու առաւօտեան ժամերգութիւններ, նախազահութեամբ Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեանի: Արարողութիւնները աւարտեցան գիշերուան ժամը 9.30ին:

* Կիր. 29 Օգոստ.— ՎԵՐԱՓՈՒՍՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ: Առաւօտեան ժամը 8ին, Գերշ. Տ. Ծահէ Արք. Անէմեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր երկուսն անման ինքնաշարժներով իջան Գեթսեմանիի ձորը ու քիչ ետք «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսատար Ս. Պատարագը մատուց Գերշ. Հանդիսապետ Արքագանը և քարոզեց՝ «Օրհնեալ ես դու ի կանայս» բնարանով, ներկայացնելով Ս. Կոյսը իբրև տիպար կինը և մայրը թովանդակ մարդկային ցեղին: Ս. Պատարագէն ետք Գերշ. Արքագանը նախազահեց սրբավայրին առջև կատարուած «Անդաստան»ին:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»ին, ինչպէս նաև ժամերգութեանէն ետք պաշտուած նախատօնակին նախազահեց Հոգշ. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գաբրիէան:

* Բշ. 30 Օգոստ.— Յիշատակ մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տառուշարեան: Ապա կատարուեցան հոգեհանգստեան կարգեր, նախ Մայր Տաճարին մէջ և ապա գաւիթը՝

Երանաշնորհ Տ. Կիրեղ Բ. Պորթ. Հօր շիրմին վրայ: Հանդիսապետն էր Հոգ. Տ. Մաշտոց Վրդ. Բարխուբեան:

* Ծր. 4 Սեպտ.— Է. օր Վերափոխման: Ս. Պատարագը մատուցուցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ժամարարն էր Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

* Կիր. 5 Սեպտ.— Ը. օր Վերափոխման: Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Էարութեան Տաճարի վերնատան Երաշխատր Ս. Աստուածածնի մատուռին մէջ: Ժամարարն էր, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Հոգ. Տ. Վաղարշ Վրդ. Խաչատուրեան:

* Բշ. 6 Սեպտ.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Ծահէ Արքեպս. Աճէմեան:

* Գշ. 7 Սեպտ.— Ս. Յովակիմայ և Աննայի: Ս. Պատարագը մատուցուցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Ժամարարն էր, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Հոգ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան:

* Ծր. 11 Սեպտ.— Ս. Առաքելոցն՝ Թովմայի, Յակոբայ և Ծմառնի: Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգ. Տ. Ռուբէն Արք. Յովակիմեան: Ապա կատարուցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ հանգ. Տ. Սուրբէն Արքեպս. Քէմիսեանի հոգւոյն համար, անոր մահուան քառասունքին ստթի, նախագահութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեանի:

— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Նորայր Արքեպս. Պողարեան:

* Կիր. 12 Սեպտ.— Գիտ Գօտոյ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Հոգ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան: Երթ ու դարձի թափօրները զիսաւորեց Գերշ. Տ. Ծահէ Արքեպս. Աճէմեան:

* Ծր. 18 Սեպտ.— Նիկիոյ Ս. Ժողովոյն (325): Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգ. Տ. Գեղարդ Արք. Տաւուտլարեան:

* Կիր. 19 Սեպտ.— Բարեկենդան Ս. Խաչի պահոց: Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնատան մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

* Բշ. 20 Սեպտ.— Ս. Կոյսի ծննդեան հանդիսատր նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

* Գշ. 21 Սեպտ.— Ծնունդ Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեանի զիսաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափստ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսատր Ս. Պատարագը մատուց Հոգ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան, եպիսկոպոսական խոր ի գլուխ:

* Ծր. 25 Սեպտ.— Տօն Եկեղեցւոյ ի նստակատիս Ս. Խաչին: Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգ. Տ. Ռուբէն Արք. Յովակիմեան:

— Խաչվերացի հանդիսատր նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լու-

ՊԵՏՏՈՆԵԿԱՆԵՐ



* Կիր. 15 Օգոստ.— Թումանիոյ Ամեն. Տ. Ժեսթինիան Պատրիարքի անուան տօնին առթիւ, քաղաքիս Թումանական Եկեղեցիի Մեծաւորին կողմէ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Հոգ. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գաբրիէան, Հոգ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան և Տիար Գ. Հինդէան:

* Գշ. 31 Օգոստ.— Անգլիոյ Դեսպան Անթօնի Էլիօթի ծովամոյն ըլլալուն առթիւ, Բրիտանական Ընդհ. Հիւպատոսարանին մէջ բացուած ցաւակցութեան տոմարին մէջ իրենց անունները արձանագրեցին Ն. Ամեն. Պատրիարք Ս. Հայրը և Գերշ. Տ. Ծահէ Արքեպիսկոպոս:

ասարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս, որ ապա Ս. Խաչի մատուցը թափօրով փոխադրեց Ս. Գլխադրի մատուռէն Աւագ Մեղան:

— Գիշերասկիզբին, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեղեցի»ի և Հսկման ւարարողութիւններուն նախագահեց Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

* Կիր. 26 Մեպտ.— ՏՕՆ ՎԵՐԱՑՄԱՆ Ս. ԽԱՉԻՆ, Օրուան հանդիսատր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Մեղանին վրայ մատուց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպ. Ապանեան: Ս. Պատարագի ընթացքին, ընկալեալ սովորութեան համաձայն, կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսատր պաշտօն՝ Ս. Աթոռիս և ազգիս հանգուցեալ քարերար Կարապետ և Գրիգոր Մեղզոնեան եղբայրներու հոգեհերուն համար: Հանդիսապետն էր Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Խաչվերացի մեծ «Անդաստան»ը, նախագահութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արք.ի:

* Բշ. 27 Մեպտ.— Յիշատակ մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադրի: Ժամարարն էր Հոգ. Տ. Ասպետ Արդ. Պալեան: Ապա կատարուեցան հոգեհանգստեան կարգեր, նախ Մայր Տաճարին մէջ և ապա զաւիթը՝ Երան. Տ. Կիրեղ Բ. Պորք. Հօր շիրմին մօտ: Հանդիսապետն էր Հոգ. Տ. Կորին Ծ. Վրդ. Մանուէլեան:

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Յ

— ՍԻՈՆՆԻ ԵՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԸ

ԳՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ԱՍԱՅԱԾ ԵՆ ՀԵՏԵԻՆԱԿ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- Manuscript - Tom Sturges* — Lorne Shirinian. Toronto, Ont., Manna Publishing, 1971, p. 26.
- Architectural Confrontation in the Old City of Jerusalem* — Aharon Kashtan. Read Sept. 15th, 1967 at the 4th Session XV^o Congresso Internazionale di Storia dell'Architettura. Roma, Atti XV^o Congresso Internazionale Centro di Studi per la Storia dell'Architettura, pp. 34.
- Around the World in Fitchburg* — Doris Kirkpatrick (Pages 305-320 deal with "The Up-rooted Armenians"). Volume II. Fitchburg, Fitchburg Historical Society, 1975, pp. 451.
- Einige Randbemerkungen Zum Osterlichen Gottesdienst in Jerusalem Vom 4. bis 8. Jahrhundert*. Extracta ex vol. XXXIX Fasc. II — 1973, "Orientalia Christiana Periodica". Author: Gabriele Winkler. Roma, Pont. Institutum Orientalium Studiorum, 1973, pp. 481-490.
- Zur Geschichte des Armenischen Gottesdienstes im Hinblick Auf Den in Mehreren Wellen Erfolgen Griechischen Einfluss* — von Gabriele Winkler. Extract from "Oriens Christianus", Band 58. 1974. Wiesbaden, Otto Harrassowitz, 1974, pp. 154-172.
- Über Die Kathedralvesper in den Verschiedenen Riten des Ostens und Westens* — von Gabriele Winkler. Extract from "Archiv für Liturgiewissenschaft", Band XVI, 1974. Regensburg, Verlag Friedrich Pustet, 1974, pp. 53-102.
- The Mekhitarist Contributions to Armenian Culture and Scholarship* — Notes to accompany an Exhibit of Armenian Printed Books in the Widener Library. Displayed on the 300th Anniversary of Mekhitar of Sebastia, 1676-1749 — Exhibit and text by Kevork Bardakjian, Armenian Bibliographer in the Harvard College Library. Harvard, Harvard College Library, Middle Eastern Department, pp. 26.
- Echo of the Bugle* (Extinct military and constabulary forces in Palestine and Transjordan, 1915-1967) — Marcel Roubicek. Jerusalem, Franciscan Printing Press, 1975, pp. 133.
- Ararat* — Elgin Groceolose. New York, Pocket Books, 1974, pp. 450.
- Cours de Dictions Françaises* — Maurice Grevisse. Gembloux, Belgium, Editions J. Duculot, S. A., pp. 320.
- Atlas de L'Antiquité Chrétienne* — F. Van der Meer et Christine Mohrmann. Traduction de Denise van Weelderden-Bakelants et Pierre Golliet. Préface de Henri-Irénée Marrou. Paris-Bruzelles, Editions Sequoia, 1960, pp. 216.
- Unemployment and the Economic System* — B. J. Clayton. Queensland, Australia, printed by J. Pilpel & Co., Perth, Australia, 1975, pp. 15.
- 1975 Annual Report* — United States Steel Corporation, pp. 33.
- The Computational Tools of Engineering* — Michael M. Vartanian. Volume 2 — "Advances in Modern Engineering". Reading, Mass., U. S. A., Addison-Wesley Publishing Company, 1974, pp. 114.
- A Transformational Grammar of Spoken Egyptian Arabic* — Hilary Wise. Publications of the Philological Society XXVI — Oxford, published for the Society by Basil Blackwell, 1975, pp. 197.
- Greece and the Eastern Crisis (1875-1878)* — Evangelos Kofos. With a Foreword by W. N. Medlicott. Thessaloniki, Institute for Balkan Studies, 1975, pp. 283.
- Yearbook of Science and Technology* — Comprehensive Coverage of the Important Events of the year 1972, as compiled by the Staff of the McGraw-Hill Encyclopedia of Science and Technology. New York, McGraw-Hill, Inc., 1973, pp. 468.
- Sechshundfunzig Thesen Über Das Reich Gottes* — Ernst Staehelin. Basel, Verlag Friedrich Reinhardt, 1965, pp. 37.
- The Gospel According to the Wall Street Journal* — Carnegie Samuel Calian. Atlanta, John Knox Press, 1975, pp. 114.
- The Prologue to the Canterbury Tales* — Chaucer. Edited by the Rev. Walter W. Skeat. Third and Revised Edition. Oxford, at the Clarendon Press, 1949.

Poetry and Prose — Pope. With Essays by Johnson, Coleridge, Hazlitt, etc. With an Introduction and Notes by H. V. D. Dyson. Oxford, printed as above, 1953, pp. 188.

History of the British Empire — C. S. S. Higham. With 15 Maps. London, New York, Toronto. Longmans, Green & Co., 1953, p. 308.

The Faerie Queene (Book I.) — Edmund Spenser. With an Introduction and Notes by H. M. V. Percival. London, Macmillan and Co. Ltd., 1951, pp. 342.

Les Quarante-Cinq — Alexander Dumas. Tome Deuxième. Paris, Nelson & Calmann-Lévy Same as above — Tome Troisième. 1934, pp. 377. [1935, pp. 380.

A Tale of Two Cities — Charles Dickens. Edited with a Life of Dickens, Notes and Other Aids to the Study of the Book by A. B. de Mille. Boston, New York, etc. Allyn and Bacon, 1922, pp. 606.

Hamlet — Shakespeare. Edited by A. W. Verity. Cambridge, Univ. Press, 1948, pp. 262.

The Trumpet-Major — John Loveday — *A Soldier in the War With Buonaparte and Robert His Brother* — First Mate in the Merchant Service. A Tale by Thomas Hardy. Edited by Mrs. F. S. Boas. London, Macmillan & Co. Ltd., 1951, pp. 379.

The Rivals — By Richard Brinsley Sheridan. With Introduction and Notes by Robert Her-ring. London, Macmillan & Co. Ltd., 1952, pp. 131.

The Matriculation French Course (Fifth Edition, Twenty-first Impression) — By Ernest Weekley. London, W. B. Clive; University Tutorial Press Ltd., 1931, pp. 347.

King Henry the Fourth (Second Part) — By William Shakespeare. With an Introduction and Notes by K. Deighton. London, Macmillan & Co. Ltd., 1949, pp. 195.

King John — William Shakespeare. With Introduction, Foot and Marginal Notes, Appendix on Grammar, Versification, Glossary etc. by Rev. F. Marshall and R. G. Gill. Oxford and Cambridge Edition. London, George Gill & Sons, Ltd., pp. 178.

Three Novels — a) *Headlong Hall*, b) *Nightmare Abbey*, c) *Crotchet Castle* — Thomas Love Peacock. With an Introduction by John Mair. London, etc. Thomas Nelson and Sons Ltd., 1940, pp. 320. [468.

Jane Eyre — Charlotte Brontë. Chatham, printed in Great Britain by Mackays Ltd., pp.

A New Way to Pay Old Debts — A Comedy by Philip Massinger, edited with an Introduction and notes by M. St. Clare Byrne. London, Falcon Educ. Books, 1949, pp. 168.

The Contribution of the Arabs to Education — Khalil A. Totah. Teachers College, Columbia University, Contributions to Education, No. 231. New York City, Bureau of Publications, Teachers College, Columbia University, 1926, pp. 105.

American Poetry and Prose — Edited by Norman Foerster. Boston, Houghton Mifflin Company, the Riverside Press, Cambridge. Fourth Edition, Complete, 1957, pp. 1664.

Cognac - Jerusalem — 17 au 29 juillet 1972. Paris, Routes Chrétiennes, Juin 1965, pp. 48 + 8.

Directory of Armenian Scholars in American and Canadian Academic Institutions — The Armenian Assembly. Washington, D. C., the Armenian Assembly, 1976, pp. 48.

Դասագիրք Մայրենի Լեզուի ԲԱՆՆԻ (Ա. Տարի) — Կազմեց՝ Եռուշնիկ Մուղէլ: Լոս Անճէլէս, Գալիֆօրնիա, շրատ. Հայ գրթական ծան, 1944, էջ 84:

Յառաջ ԾՓ — Փարիզ, Տպ. «Յառաջ», 1976, էջ 402:

Ճգնաթիւնը — Աստուծոյ Փրկարարները — Նիգոս Գաղանձագիտ: Յունարէնէ Թարգմանեց՝ Մարգար Եսրայիլանեան: Թարոնթօ, ԳԱԼ շրատարակչական Տան: 1973: Մատենաշար Թարգմանական Գրականութեան, Թիւ 3: էջ 93:

Նախադրութեան Սրգարան (Ա. - Ե. Գատարաններու համար): Գատարանեց՝ Սարգիս Փանոսեան: Գէյրուսթ, շրատ. Սևան շրատարակչական Տան: Տպ. Սևան, 1971, էջ 91:

Խոնամ Սիրը Զի Գիտեր ԲՈՒ Ուր Կ'երթայ (Վէպ) — Փօլ Գուրժէ: Թարգմանեց Արմենուհի Գաղանեան: Իսթանպուլ, շրատ. «Կուպէլ», 1972, էջ 285:

Խորագրէն Դուստրը (ժամանակակից Վէպ) — Յակոբ Կարապետեց: Վաշինգտոն, 1972: Տպւած Գէյրուսթ, Տպարան Ատլաս, 1972, էջ 219:

Երկերի ժողովածու (Հատար Առաջին, Բանաստեղծութիւններ) — Գէորգ Իմին: Երևան, «Հայաստան» շրատարակչութիւն, 1972, էջ 417:

Հիլլադայի Հերոսները (Հին Յունական Առասպելներէ) — Վերա Սմիռնովա: Թուսթէնից Թարգմանեց Ն. Վ. Վարդանեան: Միթին և բարձր տարր. քերականների համար, Երևան, շրատ. ըստ նախադրին, 1976, էջ 119:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ		
Ալեքս և Մարի Մանուկեան ժառանգատրաց Վարժարանի և Ընծայարանի Ուսումնական Նոր Տարեշրջանը	Ա. Գ.	214
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ		
Ածդահակն ու Տիգրանը	Եղիվարդ	220
ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ		
Տեսական Աստուածաբանություն	ՄԱՂԱԹԻԱ ԱՐԲԵՊՍ. ՕՐՄԱՆԵԱՆ	227
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ		
Սեմեակիս մեջ Առանձինն. . .	ԱՆՏԻԵ ՏԻՄՍԱ	
• • •	Թրգմ. Ս. Ե. Մ.	233
!	ՈՒԻԼԻԸՄ ՈՒԸՐՏԶՈՒԸՐԹՂ	
	Թրգմ. Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	234
Հայաստանին	Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	234
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ		
Մարկոս Պատկերահան	Ն. ԱՐԲ. ԾՈՎԱԿԱՆ	235
ՅՈՐԵԼԵԱՆՆԵՐ		
Նորից մի պայծառ զորատր գրիչ	ՄԱՐՕ ՄԱՐԳԱՐԵԱՆ	237
ԳԻՏԱԿԱՆ		
Հոյամողէզներու կեանքն ու մահը	ՃԷՅՄԶ ՄԻՉՆԸՐ	
	Թրգմ. ՀՐԱՆԴ ՆԱԳԱՇԵԱՆ	246
ՏԻՐՈՒՆԻ		
Կարգ վերջին օծման և թաղման . Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Թեմհանեանի		250
Հանգիստ Աղանի Մայրապետ Ճեվահիրճեանի		252
Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ		
Եկեղեցականք-Բեմականք		253
Պաշտօնականք		256
ՅԱՆԵԼՈՒԱԾ		
Յանկ «Սիոն»ի խմբագրության և Գ. Կիպպեկեան Մատենադարանին կողմէ Ստացուած Գիրքերու		257
Բովանդակություն		259

C O N T E N T S

EDITORIAL

The new scholastic year at the Alex and Marie Manoogian Seminary	A. K.	214
---	-------	-----

POETRY

Ajtahag and Dickran	<i>Yeghivart</i>	220
---------------------	------------------	-----

THEOLOGY

Rudiments of Theology	<i>Archbp. Maghakia Ormanian</i>	227
-----------------------	----------------------------------	-----

POETRY

In my room, alone	<i>André Dumas</i>	
	<i>Trans. by S. A. M.</i>	233

∴

	<i>William Wordsworth</i>	
	<i>Trans. by M. Manoogian</i>	234

For Armenia	<i>Mourad Manoogian</i>	234
-------------	-------------------------	-----

PHILOLOGY

Margos the Illuminator	<i>Archbp. N. Dzovagan</i>	235
------------------------	----------------------------	-----

ANNIVERSARIES

The poet Yeghivart	<i>Maro Markarian</i>	237
--------------------	-----------------------	-----

SCIENCE

The life and death of the Dinosaurs	<i>James Michener</i>	
	<i>Trans. by H. Nakashian</i>	248

OBITUARIES

His Grace Archbp. Souren Kemhajian		250
------------------------------------	--	-----

Sister Aghavni Jevahirjian		252
----------------------------	--	-----

Monthly news from the Armenian Patriarchate		253
---	--	-----

Books received by the C. Gulbenkian Library		257
---	--	-----

Contents		260
----------	--	-----

Yearly subscription: Dollars 10 U. S.
 All correspondence should be addressed to:
 Ara Kalaydjian, The St. James Press
 P. O. Box 14001, Jerusalem — Israel